

Կիրանցում ագրոբիզնես զարգացնելու ինչ հնարավորություններ կան, երբ 2024-ին սահմանազատման անվան տակ Կիրանցից շուրջ 15 հեկտար հող Ադրբեջանին հանձնելու հետեւանքով նվազել են գյուղատնտեսությամբ զբաղվելու հնարավորությունները, արոտավայրերի կրճատվելով գյուղում պակասել է խոշոր եղջերավոր անասունների թիվը:

Կարդացեք՝ էջ 4

Փաշինյանը Քննչական կոմիտեի միջոցով եւ ԱԺ ամբիոնից հայտարարեց, որ ով իր ծանոթին, բարեկամին փորձի ուղղորդել, համոզել, որ նա քվեարկի ոչ ՔՊ-ի օգտին, ուրեմն քրեական հանցագործ է՝ կկալանավորվի: Փաշինյանն այս ներկայացումները հատուկ էր կազմակերպել նախընտրական շրջանում՝ հասարակությանը վախ ներշնչելու համար:

Կարդացեք՝ էջ 5

Խոստումներ կլինեն, նոր «նկարած» ծրագրեր, որոնք copy-past սկզբունքով այլ երկրներից կընդօրինակեն: Բայց որեւէ մեկը պատկերացում չունի, թե ինչից է բաղկացած ՀՀ տնտեսությունը: Չմոռանանք, որ կորցրել ենք ազգային հարստության մի զգալի մասը՝ Արցախի Հանրապետությունը, հանքերը, հացահատիկը, էներգետիկ ռեսուրսները:

Կարդացեք՝ էջ 6

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 18 (4153), 13 փետրվար, ուրբաթ, 2026

www.hraparak.am

Վերջին շրջանում դատարանները սկսել են քաղաքական աղմկոտ գործերով կալանավորված անձանց խափանման միջոցները փոխել տնային կալանքով: Իհարկե, անձի ազատության առումով տնային կալանքը ոչնչով չի տարբերվում, անգամ ավելի խիստ ռեժիմ է ենթադրում, քան բանտային կալանքը, որովհետեւ լրացուցիչ սահմանափակումներ են դրվում անձի տեսակցությունների, հաղորդակցության նկատմամբ, սակայն հանրային ընկալման մեջ դա դրական փոփոխություն է՝ «մարդը գոնե իր տանը կլինի» պատճառաբանությամբ: Այդպես վարվեցին Միքայել եւ Մկրտիչ սրբազանների, Դավիթ Համբարձումյանի, Սրբազան շարժման գործով անցնող Արցախի պատգամավոր Դավիթ Գալստյանի եւ ուրիշների մասով: Որոշ տեղեկություններով՝ քաղբանտարկյալների նկատմամբ այս «մեծահոգությունը» իշխանությունը սիրահոժար չի անում, այլ՝ որոշ ճնշումների ազդեցությամբ: Վերջին շրջանում ընդդիմությունը, հանրային տարբեր շրջանակներ բարձրաձայնում են Հայաստանում քաղաքական հալածանքների դեպքերը, միջազգային հանրությանը մեղադրում բռնությունները խրախուսելու համար, նամակ-բողոքներ են հղում տարբեր կառույցների, եւ դա որոշակի ազդեցություն է ունեցել: Միջազգային գործընկերները Փաշինյանին հորդորել են՝ ընտրությունների նախաշեմին ռեպրեսիաները մի քիչ թուլացնել, որ իր հեղինակությունը փոքր-ինչ բարձրանա: Ասել են, որ իրենք այլեւս չեն կարող նման մասշտաբների ռեպրեսիաների նկատմամբ աչք փակել եւ ձեւացնել, թե Հայաստանում ժողովրդավարություն է տիրում:

Անդատ ստանալու հայտ ներկայացրած ՔՊ-ականների տվայտանքներն այս կիրակի կավարտվեն՝ այսօր մեկնարկող ներկուսակցական ընտրությունները կավարտվեն կիրակի օրը, եւ հնարավոր է գիշերը հրապարակեն ՔՊ նախընտրական նախնական ցուցակը: Հիշեցնենք, որ փետրվարի 13-15-ը կուսակցության պատվիրակները պետք է այցելեն ՔՊ կենտրոնական գրասենյակ եւ 276 հոգանոց ցուցակից 50-ական թեկնածու ընտրեն: Ապա քվեարկության արդյունքները կամփոփվեն, եւ ռեյտինգային կարգով կձեւավորվի ՔՊ-ի նախնական ցուցակը՝ ամենաշատ ձայն ստացածից մինչեւ ամենաքիչը: Իսկ առաջին 50 թեկնածուներն արդեն մարտին ներկուսակցական հարթակում քարոզարշավ կանցկացնեն, որպեսզի պատվիրակները նորից ընտրություն կատարեն այդ 50-ի մեջ՝ որոշելով, թե ով է վարչապետի թեկնածուն եւ ով որ տեղը պետք է զբաղեցնի:

Դանակը՝ ոսկորին

Երեկ ասպարեզ իջավ նոր քաղաքական ուժ՝ «Ուժեղ Հայաստան» անունով, որը հայտ է ներկայացրել Հայաստանի Հանրապետությունում իշխանության գալու: Բայց, ինչպես 2021-ին ամենաընդդիմադիր քաղաքական ուժը՝ «Հայաստան» դաշինքը, քաղաքական դաշտում հայտնվեց միայն այն բանից հետո, երբ նրա առաջնորդի՝ Ռոբերտ Քոչարյանի նկատմամբ քրեական-քաղաքական հետապնդում ծավալեց Փաշինյանի իշխանությունը, այնպես էլ «Ուժեղ Հայաստան» կուսակցությունը, «Մեր ձեւով» շարժումն առաջացան իրենց առաջնորդի՝ Սամվել Կարապետյանի դեմ սանձազերծված քաղաքական ապօրինի հետապնդումից հետո: Ինքը՝ Կարապետյանն անձամբ, տարիներով աջակցում էր Նիկոլ Փաշինյանին, տնտեսական ծրագրեր էր իրականացնում: Նիկոլ Փաշինյանը կարծես «զոռով» ստիպում է, որ քաղաքականությամբ չզբաղվող մարդիկ մտնեն քաղաքականություն՝ նրանց նկատմամբ նողկալի քաղաքական հետապնդումներով այլ ելք չթողնելով, քան քաղաքականություն մտնելն է: Առհասարակ, ցավալի բան կա այս ամենում. հայ մարդը, մինչեւ անձնապես իրեն չեն դիպչում, չի հասկանում, որ երկրում վիճակը վատ է, եւ կառավարող ուժը մեր կյանքը խաթարող, մեր պետությունը կործանող չարիքի է վերածվել, որ իշխանության քայլերը հակասահմանադրական են ու ապօրինի, մեր պետությանը, հասարակությանը վնասող: Չեն տեսնում, որ այդ իշխանությունը թշնամու առաջ «հարգեւոր հարս» է, մեր երկրում՝ «ամեհի գազան»: Մինչեւ դանակը ոսկորին չի հասնում, չեն նկատում, որ պետության արտաքին պարտքը կրկնապատկվել է, թոշակառուները գրոշներ են ստանում, իսկ ՔՊ-ական անարժան պաշտոնյաները՝ միլիոններ, որ կալանավայրերը լիքն են կալանքի ոչ ենթակա մարդկանցով, եւ 2018 թվականից ի վեր համաներում չի հայտարարվել երկրում, որ սպառողական գներն աճում են, եւ անգամ ասֆալտն էր միֆ՝ հալվեց-մաշվեց-գնաց:

Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում երեկ տեղի ունեցավ «Ուժեղ Հայաստան» կուսակցության պաշտոնական շնորհանդեսը, եւ հայտարարվեց նաեւ վարչապետի թեկնածուի անունը: Մենք գրել էինք, որ գործարար Սամվել Կարապետյանն իրավունք չունի նախընտրական ցուցակում տեղ զբաղեցնել, բայց թիմը որոշել է նրան հայտարարել դե ֆակտո առաջնորդ, իսկ ընտրություններից անմիջապես հետո՝ հենց խորհրդարանում փոխել օրենքի այն կետը, որը սահմանում է, որ ՀՀ վարչապետ կարող է լինել 4 տարի բացառապես Հայաստանում ապրած եւ միայն ՀՀ քաղաքացի հանդիսացած անձը: Մենք տեղեկացանք նաեւ, որ կուսակցությունը կառավարող մարմին է ձեւավորել՝ քաղաքական խորհուրդ, որում ընդգրկված են Սամվել եւ Նարեկ Կարապետյանները, ՀԷՑ նախկին տնօրեն Դավիթ Ղազինյանը, սահմանադրագետ Գոհար Մելոյանն ու փաստաբան Արամ Վարդեւանյանը:

ՆՈՐ ՌԵՊՐԵՍԻԱՆԵՐ

Գաղտնիք չէ, որ Սամվել Կարապետյանի «Ուժեղ Հայաստան» կուսակցությունը նախընտրական ակտիվ աշխատանքների մեջ է, բոլոր համայնքներում գրասենյակներ են բացում, հանդիպումներ ունենում, թիմ հավաքում, ակտիվ քաղաքական գործունեություն են ծավալել, ինչը խիստ անհանգստացնում է իշխանություններին: «Ուժեղ Հայաստան»-ի դեմ ագրեսիվ հակաքարոզչություն իրականացնելուց զատ, իշխանական պատժիչ մեքենան է նաեւ գործի անցել: Տեղեկություններ ունենք, որ իշխանության տարբեր օղակներից փնտրում-գտնում են բոլոր այն սեփականատերերին, որոնք վարձակալությամբ գրասենյակներ, տարածքներ են տրամադրում Կարապետյանի թիմին, համագործակցում են նրանց հետ, եւ փորձում են ճնշումներ բանեցնելով՝ ստիպել, որ հետ կանգնեն նոր քաղաքական ուժի հետ համագործակցելուց: Անգամ սկսել են ստուգել անշարժ գույքի, գրասենյակների տարածքների սեփականության օրինականությունը, փորձելով վախի մթնոլորտ ստեղծելով՝ մարդկանց հետ պահել ընդդիմադիր շարժմանն աջակցելուց:

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆՔ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԻԱՅՆ ՄԵԿ՝ ԳՈՐԾՈՂ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆԸ ՀԵՌԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

*Հարցազրույց «Հայրենիք» կուսակցության ղեկավար **Արթուր Վանեցյանի** հետ*

- Գիտեմ, որ մտահոգված եք Ձեր ընկերոջ՝ Խաչիկ Գալստյանի նկատմամբ իրականացվող հետապնդումներով, կալանքով: Ի՞նչ պլաններ ունեք քաղբանտարկյալի պաշտպանության առումով:

- Խաչիկ Գալստյանի պաշտպանությամբ իրավաբանական մասով զբաղվում է փաստաբանական խումբը, ընդ որում, նրանց գնահատմամբ, ընդհանրապես հիմք չկա Խաչիկ Գալստյանին քրեական հետապնդման ենթարկելու եւ ազատությունից զրկելու համար: Մնացած քաղաքական ակցիաները, քաղաքական պրոցեսները հանրության աչքի առջեւ են: Ինչ խոսք, մեր պայքարը ոչ միայն Խաչիկ Գալստյանի ազատության, այլեւ առհասարակ բոլոր քաղաքական բանտարկյալների ազատության համար է, եւ չի կարելի տարանջատել՝ մարդը կուսակցության անդամ է կամ առհասարակ կուսակցական չէ, ուղղակի մարդ է, որ ունի տարբերվող հայացքներ այս իշխանությունների հայացքներից եւ դրա պատճառով հետապնդվում է: Մենք պայքարում ենք բոլոր քաղբանտարկյալների համար, հիմա, ցավոք, Հայաստանում աննախադեպ քանակի՝ քաղաքական հայացքներով պայմանավորված բանտարկյալներ կան, այսպիսի իրավիճակ երբեւիցե, կարծում եմ, չի եղել:

- Եվ որքան նախընտրական պայքարը թեժանա, նման բանտարկյալները, կարծում եք՝ կարող են ավելանալ:

- Միանշանակ՝ այո, դա իշխանությունը չի էլ թաքցնում, բացահայտ ասում են՝ ով իրեն լավ չպահի, կտանենք կլցնենք, իրենց բառերով ասած՝ «ԿԳԲ-ի պադվալները», այս կանենք, այն կանենք: Բայց դա մեզ չի վախեցնում, եւ վստահ եմ, որ որեւէ մեկին չի վախեցնում: Այլեւս Հայաստանում մարդուն ազատությունից զրկելով՝ չես կարող վախեցնել, դարձել է սովորական, եւ մարդիկ պատրաստ են իրենց գաղափարների համար, իրենց պայքարի համար նաեւ զրկվել ազատությունից:

- Ուղղակի այնքան չզրկվեն, որ ընդդիմադիր թեւի հիմնական ուժերը պակասեն՝ նախընտրական պայքարի կազմակերպչական փուլում: Կամ այդպիսի մտավախություն:

- Իհարկե, նման վտանգ կա, որովհետեւ, օրինակ, Խաչիկ Գալստյանը «Հայրենիք» կուսակցության գլխավոր քարտուղարն է, եւ դուք հասկանում եք, որ հատկապես էս նախընտրական փուլում ինչքան մեծ ծավալի աշխատանք էր կատարում, եւ նրան այս համակարգից հանելը, անգամ 1 կամ 2 ամսով, իրականում բավականին բարդացնում է մեր կուսակցական աշխատանքները, ընդ որում՝ թե գաղափարական, թե կազմակերպչական առումներով: Բայց էլի եմ կրկնում՝ մենք պատրաստ ենք դրան, վստահ եմ, որ Խաչիկն էլ է պատրաստ, մնացածն էլ, ով այսօր անազատության մեջ է, պատրաստ են, ու ինչքան էլ գործը բարդանա, որեւէ խնդիր չեմ տեսնում: Օրը գալու է, բոլորը պատասխան են տալու թե օրենքի առջեւ, թե իրենց խղճի առջեւ, նրանք չեն կարող խուսափել այս ամենի համար պատասխանատվությունից:

- Նախորդ ընտրապայքարում դուք չունեիք, չէ՞, ձեր կուսակցությունից այդպիսի կարգավիճակով ներկայացուցիչ:

- Չէ, բայց, առհասարակ, առաջին քաղաքական հայացքներով բանտարկյալն էլի եղել է մեր կուսակցությունից՝ Արսեն Բաբայանը, որը հիմա Խաչիկ Գալստյանի փաստաբանն է: Այդ գործը գուցե մոռացվել է, բայց նրան ձերբակալեցին, եւ մեղադրանք ներկայացվեց՝ «իշխանությունը զավթելու համար», որն անհեթեթություն էր, ազատազրկեցին որոշ ժամանակով, հետո ազատ արձակեցին:

- Եվ Արսեն Բաբայանն իշխանություն չէր զավթել ու մինչեւ հիմա էլ, կարծես, չի զավթել, փաստորեն:

- Այո, (ծիծաղում է), չզավթեց ու, ամենակարեւորը՝ դատարանում արդարացվեց: Այսինքն՝ մարդուն հետապնդել են, ինչ-որ մի փուլում ազատազրկել են, վերջում պարզվել է, որ սուտ է, դատական վախճան չի ունեցել այդ գործը: Նույնը Խաչիկ Գալստյանի դեպքում կլինի: Ես առաջին օրը, երբ Խաչիկ Գալստյանին ձերբակալեցին, ասել եմ՝ չեմ կարող մանրամասներ հայտնել, որովհետեւ կաշկանդված եմ նախաքննական գաղտնիքով, բայց վստահաբար ասում եմ, որ այստեղ գործ չկա: Ժողովրդի լեզվով ասած՝ գործը ջուր է եւ այդ գործը եւս չի ունենալու դատական վախճան, դա զուտ պատժիչ գործողություն է: Ընդ որում՝ Խաչիկ Գալստյանին, նաեւ Արամ Քոչարյանին եմ ուզում հիշատակել՝ մեր Վաղարշապատի կառույցի պատասխանատուին, որը էլի ձերբակալվեց դեկտեմբերի 30-ին: Նկատենք, որ այն տվյալները՝ իբրեւ այդ «հանցագործության» մասին, իրենք ձեռք են բերել նոյեմբերի 16-ին, հիմա հարց է առաջանում. եթե այդ տվյալները ստացել եք նոյեմբերի 16-ին, ոչինչ դրանցում ոչ ավելացել, ոչ պակասել է, ինչո՞ւ այդ գործողությունը չարեցիք անմիջապես հաջորդած օրերին՝ նոյեմբերի 17-ին, 18-ին, այլ ձերբակալեցիք հատկապես դեկտեմբերի 30-ին: Իմաստը ո՞րն էր:

- Կարծո՞ւմ եք՝ այդ հետաձգման նպատակն ընտանիքներին, հարազատներին ընկճելն է, նաեւ՝ ձեզ հոգեբանորեն ճնշելն է:

- Իհարկե, շատ դժվար կացություն է ստեղծվում մարդկայնորեն: Ընդ որում՝ ընտանիքի անդամների համար. անչափահաս երեխա ունի Խաչիկը, Արամն ունի երեխաներ, իրենց ընտանիքների համար, իհարկե, շատ բարդ է: Բայց ես հասկանում եմ, եւ իրենք էլ են հասկանում: Ընդ որում՝ Խաչիկը մեզնից ավելի պինդ է իրեն պահում հիմա: Այնտեղից բոլորին ասում է՝ հանկարծ չհուսահատվեք, գնացեք առաջ, պետք է պայքարենք, պայքարը շարունակում ենք:

- Դուք ասում եք՝ մի երկու ամիս են հետաձգել, բայց ունենք այսպիսի քրեական գործ, որտեղ մի 7 տարի են բաց թողել:

- Արշակ սրբազանի մասին եք ակնկարկում, այո, հերթական քաղբանտարկյալի մասին է: Գիտե՞ք, մենք մի աբսուրդ ժամանակահատվածում ենք ապրում, երբ սրբազաններն են գտնվում կալանքի տակ, եւ մենք հիմա, չգիտեմ՝ իրենց անվանենք քաղբանտարկյա՞լ, թե՞ ինչ: Շատ լավ բնութագիր են տվել՝ «խղճի բանտարկյալներ», երեւի այդպես պետք է անվանենք, որովհետեւ իրենք քաղաքական գործունեությամբ չեն զբաղվում:

- Քաղաքական գործունեությունն է հիմա ավելի շատ խղճի գործունեության հետ նույնացվում:

- Այո, այո:

- Դուք ասացիք՝ նախաքննական գաղտնիք չեմ բացահայտի, ու ես մտածեցի, որ Դուք ընդհանրապես շատ գաղտնապահ եք: Հանրությունը կարծում է, որ Դուք պաշտոնի բերումով շատ բան գիտեք, բայց ո՛չ նախորդ ընտրություններին եւ ո՛չ էլ մինչեւ հիմա չեք բացահայտել: Թվում է՝ կա ակնկալիք, որ եթե ոչ նախաքննության գաղտնիքները, այլ բաներ կարող եք ասել, որոնք մարդկանց համար գուցե կարեւոր կլինեն ընտրություն կատարելիս: Սպասե՞նք Ձեզնից այդպիսի բացահայտումներ:

- Ես բազմիցս ասել եմ, որ իմ ծառայության ընթացքում ինձ հայտնի դարձած տվյալները երբեք չեմ հրապարակայնացնելու:

- Արդյոք իրենք այդպե՞ս կվարվեին:

- Այսպես ասեմ. իմ եւ այս իշխանությունների տարբերությունը հենց դրա մեջ է, որ ես, չլինելով իշխանություն, ավելի մեծ պատասխանատվություն եմ զգում պետության եւ պետականության, պետական ինստիտուտների նկատմամբ, քան՝ իրենք: Իրենք ցանկացած պահի ցանկացած գաղտնիք կարող են հրապարակել:

- Իսկ կարո՞ղ են չեղած տվյալներ գեներացնել, հրապարակել:

- Կարող են գեներացնել ու չմտածել հետեւանքների մասին: Ինձ համար ամենածանրն այն է, երբ հատկապես Ազգային անվտանգության ծառայությանը վերաբերող տեղեկություններ են սկսում հրապարակայնացնել: Մենք ականատես եղանք մի բանի, որն ամենավատ երազում չէինք կարող տեսնել՝ ԱԱԾ-ն պաշտոնական պատասխան է տալիս մի լրատվամիջոցի, այն մասին, թե իբրեւ այսինչը հանդիսացել է ԽՍՀՄ ՊԱԿ-ի գործակալ: Մենք՝ ԱԱԾ աշխատակիցներս, ամենավատ երազում չէինք կարող պատկերացնել, որ այդ շենքից հնարավոր է նման տեղեկատվություն դուրս գա:

- Տեսակետ կա, որ խորհրդային պետությունն էլ չէր կարող պատկերացնել, որ իր ԿԳԲ-ում եղել են հայերենով այդպիսի փաստաթղթեր: Այդ թղթի կեղծ լինելու մասին վարկածը կարո՞ղ է գոյություն ունենալ, մինչեւ մի օր իրականությունը պարզվի:

- Համենայնդեպս, ես չեմ պնդում, թե այդ թուղթն իրական է կամ կեղծ է: Անգամ այդ բանավեճի մեջ չեմ մտնում, ես ասում եմ՝ ԱԱԾ-ն պաշտոնապես պատասխանել է ինչ-որ մի լրատվամիջոցի հարցի, այն դեպքում, երբ, առհասարակ, այդ հարցի ձեւակերպումն արդեն կոռեկտ չէ, իսկ դրան պատասխանելը հանցագործություն է:

- Երբեմն հակառակորդին ձեռնտու է, երբ իր դեմ պայքարողները սկզբունքային են, բայց նախընտրական շրջանում այդպիսի անդավաճան սկզբունքներով զինված՝ ընդդիմությունը կարո՞ղ է հաղթել: Ընդհանրապես, ժամանակը շատ քի՞չ է, կարողանալո՞ւ է ընդդիմությունն արագություն հավաքել եւ հաջողություն գրանցել ընտրություններում:

- Վստահ եմ, որ, այո, կկարողանանք, վստահ եմ, որ հաջողելու ենք, բայց շատ կարեւոր է ընդդիմադիր հիմնական ուժերի ճիշտ համագործակցությունը: Եթե չլինի այդ համագործակցությունը, եթե բոլորը միայն իրենց շահով ու իրենց ամբիցիաներով առաջնորդվեն, որեւէ օգուտ չենք ունենալու: Բայց վստահ եմ, որ այդպես չի լինի, ու նաեւ գիտեմ, որ ընդդիմադիր հիմնական խաղացողները գոնե այս փուլում շատ միասնական են, աշխատում են մի նպատակի համար: Այդ նպատակը պետք է ֆիքսել, մենք պետք է հասկանանք՝ ինչի համար ենք մասնակցում ընտրություններին: «Հայրենիք» կուսակցությունը եւ ես մասնակցում ենք ընտրություններին՝ Նիկոլ Փաշինյանին եւ ՔՊ-ին իշխանությունից հեռացնելու համար: Իմ նպատակը պատգամավոր դառնալը չէ, իմ նպատակն ԱԺ-ում խմբակցություն ունենալը չէ, իմ նպատակն այս իշխանությունից ազատվելն է, եւ ես ամեն ինչ անելու եմ, որ մենք դրան հասնենք:

Շաբե ԱՎՈՅԱՆ

7-ԱՄՅԱ ՏՂԱՅԻ ՄԱՅՐԸ ԴԱՏԱՊԱՐՏՎԵԼ Է 8 ՏԱՐՎԱ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ

Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը հունվարի 30-ին որոշել է Դիլիջան քաղաքի Մոլդովական փողոցում փաստացի բնակվող, 2018 թվականին ծնված Միխայիլ Կոնստանտինովիչ Կոնդրատեւին, որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխայի, վերցնել սկզբնական հաշվառման: Այդ որոշման համար հիմք է հանդիսացել այն, որ Միխայիլի մայրը՝ 1982թ. ծնված Ելենա Վալերեւնան, դատարանի վճռով դատապարտվել է 8 տարի ազատազրկման (դատավճիռն օրինական ուժի մեջ է մտել 2021թ. սեպտեմբերի 15-ին): Իսկ երեխայի հայրն անհայտ է: Միխայիլ Կոնդրատեւը Դիլիջանում ապրում է 1993թ. ծնված Եկատերինա Դմիտրիեւնա Բայնովայի խնամքի տակ: Նրան պահում, խնամում եւ դաստիարակում է մեկ այլ ռուս կին՝ Եկատերինա Բայնովան: Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքը հայտնում է, որ փետրվարի 10-ին համայնքի ղեկավար Դ. Սարգսյանը որոշել է Դիլիջան քաղաքի բնակչուհի Եկատերինա Դմիտրիեւնա Բայնովային Միխայիլ Կոնստանտինովիչ Կոնդրատեւի խնամակալ նշանակել: Նաեւ խնամակալին զգուշացվել է, որ նա բնակության վայրը փոխելու դեպքում այդ մասին պարտավոր է տեղեկացնել Դիլիջան համայնքի խնամակալության եւ հոգաբարձության մարմնին:

ՀԻՄՔԵՐՈՒՄ

ՉԵՄ ԲԱՑԱՌՈՒՄ, ՈՐ ՄԻՆՉԵՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՒՆԵՆԱՆՔ ՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Ընտրությունները սարերի հետեւում չեն, բայց հայրենի ընդդիմությունը կարծես չի ընդունում, որ Նիկոլ Փաշինյանին հաղթելու համար պետք է մի քանի խնդիր լուծել: Առաջինը՝ գոնե մի քանի ամսով հրադադար կնքել՝ իրար չվարկաբեկելու, միմյանց հանդեպ հակաքարոզչությունը բացառելու մասին: Երկրորդ. պայմանավորվել հետընտրական զարգացումների մասով՝ «Գյումրի 2» սցենարով գնալու մասին: Երրորդ. համոզել անցողիկ շեմը պոտենցիալ չհաղթահարող ուժերին՝ չառաջադրվել, որ ընտրական ձայները չփոշիացնեն եւ չնպաստեն գործող իշխանության վերարտադրությանը: Հիշեցնենք, որ 4 տոկոսի շեմը չանցած ուժերի ձայները գումարվելու են խորհրդարան անցած ուժերին, եւ ամենաշատը դրանից շահելու է առաջին տեղը զբաղեցրած ուժը: Հենց այդ փոշիացման պատճառով Վաղարշապատում ՔՊ-ն զավթեց իշխանությունը, իսկ 2021-ին կայուն մեծամասնություն ստացավ: Պարզ է, որ, սրան զուգահեռ, նաեւ ընտրությունների մասնակիցները պետք է կենսունակ, իրական ծրագրեր առաջարկեն, որպեսզի ընտրողը հավատա, որ ոչ թե անձերն են փոխվելու, այլ՝ համակարգային կառավարումը:

Մինչդեռ իրար միս ուտող խորհրդարանական ընդդիմությունն ու նրանց արբանյակները կարծես քիչ էին, նոր ստեղծվող ուժերն էլ են այդ գիծը բռնել: Մեկն ասում է՝ թող նախկին նախագահները չառաջադրվեն, մյուսը հիշում է նախորդ կառավարման շրջանի սխալները: Երեկ՝ «Ուժեղ Հայաստան» կուսակցության պրեզենտացիայի ժամանակ, շարժման համակարգող Նարեկ Կարապետյանը սուր քննադատության ենթարկեց Նիկոլ Փաշինյանին, բայց նաեւ որոշ ակնարկներ արեց Սերժ Սարգսյանի հասցեին. «Թարսի նման՝ ով գալիս է, երկրորդ ժամկետից հետո երրորդն է ուզում: Մեր ժողովուրդը հո ձեր գերին չի՞: Հասկացանք՝ 1 անգամ, 2 անգամ, հենց նստում եք էդ աթոռին, մոռանում եք: Այս մարդիկ սոված են, չեն հագենում, դրա համար էլ երրորդ ժամկետ են ուզում: Ժամանակն է, որ մեր երկիրն ունենա ուժեղ, լուրջ ու կուշտ առաջնորդ»:

Ի՞նչն է խանգարում ընդդիմադիրներին՝ մի քանի հարցում իրար հետ լեզու գտնելու: ՀՅԴ ԳՄ անդամ **Իշխան Սաղաթելյանը** դեռ անցած տարեվերջին ընդդիմադիրներին համագործակցության առաջարկ էր արել՝ 5 կետից կազմված, ապա հանդիպումներ ունեցավ գրեթե բոլոր ակտիվ խաղացողների հետ՝ իր առաջարկը ներկայացնելով: Երեկ նա մեզ փոխանցեց, որ դեռ վերջնական համաձայնություն չի կայացվել իրենց առաջարկած օրակարգի շուրջ, բայցեւ հույս հայտնեց, որ առաջիկայում կլինի: «Հարցի կարեւորությունն այնքան մեծ է, որ մնացած բոլոր տարաձայնությունները պետք է մնան երկրորդ պլանում, եւ մեր երկրի շահը, ընդդիմադիր դաշտի նաեւ հաջողության հասնելու շահը ստիպում է, որ գնան դրա ձեւավորմանը: Առնվազն մի շարք կարեւոր հարցերի շուրջ ընդդիմությունը պարտավոր է լիարժեք համագործակցել»:

Սաղաթելյանը հույս հայտնեց, որ ընդդիմության միջեւ համաձայնություն կկայանա. «Իսկ եթե՝ ոչ, այն ժամանակ նոր գնահատականներ կինչեցվեն, մանրամասներ կասվեն, թե ինչը խանգարեց, բայց ես տեսնում եմ, որ դաշտում կա այդ գիտակցումը, եւ մեծ է հնարավորությունը՝ հաջողության հասնելու»: Սաղաթելյանը հայտնեց նաեւ, որ ընդդիմադիր գործընկերների հետ ակտիվ քննարկումներ են ունենում նաեւ ընտրական «փոշու» վերաբերյալ: Ո՞ր ուժերի հետ, եւ արդյոք գրանցվել են որոշ արդյունքներ: Մեր զրուցակիցը ձեռնպահ մնաց տեղեկացնել. «Այն ուժերը, որոնք ակնհայտ գիտեն, որ չեն հաղթահարելու անցողիկ շեմը, առանձնաբար չմասնակցեն կամ միավորվեն միմյանց ու խոշոր բլոկներով մասնակցեն, որովհետեւ իրականում կան նորմալ ուժեր, որոնք շեմը հաղթահարելու դժվարություն ունեն, իսկ այդ դեպքում, անկախ իրենց կամքից, նպաստելու են այս իշխանության վերարտադրությանը»:

ՀՀԿ փոխնախագահ **Էդուարդ Շարմազանովն** էլ մեզ հետ զրույցում ընդգծեց, որ ընդդիմության առջեւ կանգնած առաջնային խնդիրն այն է, որ հարկավոր է կենտրոնանալ գլխավոր թիրախի՝ նիկոլական ռեժիմի վրա, այլ ոչ թե գործընկերների. «Հուսով եմ, որ առողջ բանականությունը կգերակշռի, եւ ազգային-պետական ուժերը, որոնց նպատակը Հայաստանի ազգային պետականության պահպանումն է, կգնան այդ ճանապարհով: ՀՀԿ-ն առնվազն ութ տարվա ընթացքում ապացուցել է, որ երբեք վերմակն իր վրա չի քաշել, միշտ փորձել է առաջնորդվել պետության շահով: Մեր սկզբունքը նժդեհյան սկզբունքն է՝ կուսակցությանս հետ, ազգիս համար»: Նկատեցինք, որ գեղեցիկ բառեր են ասում, իսկ ի՞նչն է խանգարում դա կյանքի կոչելուն: «Ինչո՞ւ եք վատատեսական տրամադրված, դեռ չկա նման համաձայնություն, բայց կարծում եմ՝ կա հնարավորություն՝ անել ամեն ինչ, որպեսզի այս փուլում ընդդիմությունը պայքարի ոչ թե իրար դեմ, այլ՝ նիկոլիզմից ազատվելու համար: Ընդդիմադիր դաշտի մեծ խաղացողներն այդքանը հասկանում են, եւ չեմ բացառում, որ կարող ենք ունենալ նման պայմանավորվածություն»: Ինչ վերաբերում է անցողիկ շեմի խնդիր ունեցող ուժերին, Շարմազանովն ասաց. «Մի կամ մի քանի կուսակցություն կա, որ, իմ տպավորությամբ, մեկ կամ երկու տոկոս ունեն, բայց իրենց որ հարցնում ենք, ասում են՝ 20 տոկոս ունենք: Հիմա մենք ի՞նչ կարող ենք ասել այդ մարդկանց, ասենք՝ մի՞ մասնակցեք, հետո կասեն՝ Շարմազանովն ասեց՝ մի մասնակցեք, բայց որ մեր 20 տոկոսը հավաքեինք, Նիկոլը չէր լինի: Սա կուսակցության առաջնորդների, ակտիվի, խոշոր ընդդիմադիրների աշխատանքային քննարկումների հարց է»: Ի՞նչ պետք է անեն այս ուղղությամբ խոշոր ուժերը: Հարցին Շարմազանովը հրաժարվեց պատասխանել՝ ասելով, թե չի հավակնում ընդդիմադիր գործընկերներին հրապարակային խորհուրդներ տալ:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ԱՅԴ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՉԷ, ՈՒՍՏԻ ԱՄԵՆ ԻՆՉ ՀՆԱՐԱՎՈՐ Է

«Ասեմ, որ այդ վճիռները, իհարկե, ինձ համար անձնապես էլ, մարդկայնորեն էլ, քաղաքական առումով էլ շատ ցավալի են եւ ծանր, բայց մյուս կողմից մենք պետք է հասկանանք, որ կոնֆլիկտն ունի իներցիա, եւ այդ իներցիան հնարավոր չէ մի լծակի գործադրմամբ կանգնեցնել»,- Հանրային հեռուստաընկերությանը տված հարցազրույցում ասել էր Նիկոլ Փաշինյանը՝ անդրադառնալով «Զայեդ» մարդասիրական մրցանակը ստանալու հենց հաջորդ օրը Բաքվի դատարանում Ղարաբաղի ռազմաքաղաքական ղեկավարների նկատմամբ կայացված դատավճիռներին: Լրագրողը հարց է ուղղել, թե դատավճիռների ուժի մեջ մտնելուց հետո հնարավո՞ր է արդյոք, կամ շանս, որ նրանք վերադառնան Հայաստան: «Բնականաբար, ես արդեն ասացի, որ այդ թեման մշտապես մեր ուշադրության կենտրոնում է, եւ բնական հարց կծագի. իսկ ո՞րն է այդ թեմայի լուծման վերաբերյալ մեր պատկերացումը: Մեր պատկերացումը նորից խաղաղությունն է, որովհետեւ խաղաղությունն է այն միջավայրը, որում հնարավոր է այդ խնդիրը լուծել: Կոնֆլիկտի միջավայրում այդ խնդիրն անլուծելի է: Ես ձեզ բերեմ մի օրինակ եւ հատկապես այդ օրինակն եմ ուզում բերել. նախորդ ամիս վերադարձան չորս անձինք, մեր հայրենակիցները: Մյուսների դեպքում չեմ ասի այդ բանը, բայց Վագիֆ Խաչատրյանի դեպքում ես ուզում եմ ձեզ միանշանակ եւ աներկբա վստահեցնել, որ եթե չլիներ խաղաղության բարելավող միջավայրը, նա չէր վերադառնա, նա չէր վերադառնա Հայաստան, առնվազն չէր վերադառնա հիմա եւ առնվազն չէր վերադառնա տեսանելի ապագայում... Ընդ որում՝ ես ձեզ մի բան եմ ուզում ասել, Դուք տեղյակ եք, որ Վագիֆ Խաչատրյանի առողջական վիճակի հետ կապված պրոբլեմներ կային, խնդիրներ կային եւ այլն, եւ էմոցիոնալ առումով մեզ համար շատ դժվար էր ռեակցիա չտալ, հայտարարություններ չանել, տարբեր միջազգային ատյաններ չդիմել եւ այլն, բայց եթե մենք գնայինք այդ ճանապարհով, էլի երաշխավորում եմ, որ Վագիֆ Խաչատրյանը չէր վերադառնա»,- ասել է վարչապետը:

Ինչո՞ւ է Նիկոլ Փաշինյանն առանձնացնում հատկապես Վագիֆ Խաչատրյանին, ո՞րն է Խաչատրյանի գործի առանձնահատկությունը: Այս հարցն ուղղեցինք ՄԻԵԴ-ում հայ ռազմագերիների ներկայացուցիչ, իրավապաշտպան **Սիրանուշ Սահակյանին**: Նա ասաց. «Վագիֆ Խաչատրյանի պարագայում մենք ունեցանք արտակարգ միջադեպ, որը նաեւ հայտնվեց միջազգային ուշադրության կենտրոնում: Կարմիր խաչի միջազգային կոմիտեի անձեռնմխելիությամբ եւ այլ իրավունքների խախտմամբ, մարդասիրական գործողությունների արդյունքում անձն իջեցվեց մեքենայից, ըստ էության՝ ձերբակալման ակտը տեղի ունեցավ Կարմիր խաչի ավտոմեքենայում, այն պարագայում, երբ մենք ոչ թե գործ ունեինք ենթադրյալ հանցագործի հանձնման նպատակով միջազգային համագործակցության հետ, որի կողմ կարող էին լինել պետությունները, այլ պարզապես ծուղակի մեջ հայտնվեց միջազգային մի կազմակերպություն, որի մանդատն ու առաքելությունը, ըստ էության, անտեսվեցին: Նման օպերացիայի շրջանակներում անձը կանգնեց դատարանի առաջ՝ անհեթեթ մեղադրանքներով՝ Խոջալուի ցեղասպանության հետ կապված, սակայն նշեմ, որ այդ մասով մենք ունենք ՄԻԵԴ վճիռ, եւ ադրբեջանցի պատմաբաններից մեկն անգամ կասկածի տակ է դրել ցեղասպանության վարկածը եւ պատմական փաստերը վիճարկելու համար ենթարկվել է պատասխանատվության: ՄԻԵԴ-ը պաշտպանել է խոսքի ազատությունը եւ այդ պատմական փաստերը կասկածի տակ դնող պատմաբանների խոսքի ազատությունը կարեւորել է: Սա՝ ուղղակի որպես հարակից տեղեկություն: Թեպետ անգամ ՄԻԵԴ-ի այս գնահատականը մենք տեսանք, որ շինծու դատավարության ընթացքում ներկայացվեցին կեղծ մեղադրանքներ, եւ ադրբեջանական դատարանները հաստատեցին, թե իբրեւ ցեղասպանություն է տեղի ունեցել՝ Վագիֆ Խաչատրյանին դատապարտելով երկարաժամկետ անազատության: Չնայած դատապարտման դատական ակտին եւ այն հանգամանքին, որ Վագիֆ Խաչատրյանը պատիժը չէր կրել Ադրբեջանում, հնարավոր եղավ վերջինիս հայրենադարձել: Այստեղ գործ ունենք անձի առողջական վիճակի հետ, կարծում եմ, որ թե՛ նրա տարիքը, թե՛ առողջական վիճակը, ինչու չէ՝ քաղաքացիական անձ լինելը առիթ դարձան, որպեսզի նրան եւ այլ երեք անձանց հայրենադարձեն: Ես բազմաթիվ օրինակներ եմ նշել, որ դատավարության գործընթացներն իրավական չեն, հակառակ պարագայում պատիժը չկրած դատապարտյալը պարզապես չէր կարող հայտնվել ազատության մեջ: Դա անպատժելիություն է եւ հակասում է օրենքին: Ասեմ նաեւ, որ մարդու իրավունքների ստանդարտներն արգելում են լուրջ խախտումների պարագայում համաներումներ կիրառել, քանի որ այն կարող է համարվել վտանգավոր հանցագործությունների հովանավորում եւ այլն: Խոշտանգում կատարած անձանց, օրինակ, չի թույլատրվում համաներել»:



Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՅԴ ՄԱՍԻՆ ՀԱ՛Մ ՉԵՄ ՈՒԶՈՒՄ ԽՈՍԵԼ, ՀԱ՛Մ ՉԵՄ ՈՒԶՈՒՄ, ՈՐ ՀԱՐՑԸ ՄՆԱ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԴԱՇՏՈՒՄ

*«Հրապարակի» հարցերին պատասխանում է Գեղարքունիքի մարզպետ **Կարեն Սարգսյանը**:*

- ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով 2023 թվականի ապրիլից նախատեսվում էր սկսել Վարդենիսի բժշկական կենտրոնի վերակառուցման աշխատանքները: Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը դեռ 2025թ. փետրվարին ասում էր, որ նախագծման աշխատանքներն ավարտական փուլում են, եւ մրցույթ կհայտարարվի: Խնդրում ենք ասել՝ ո՞ր

այդ հողը գրանցենք պետության անունով եւ այդ ծրագիրն իրականացնենք: Բայց, ցավոք, սկզբում այդ քաղաքացիները չհամաձայնեցին, եւ մենք սկսեցինք մյուս պրոցեսը, որ կարողանանք հետ վերադարձնել պետությանը: Ճանապարհի կեսն անցնելուց հասկացանք, որ քաղաքացիներն արդեն փոշմանել են, ցանկանում են հողակտորը հետ վերադարձնել պետությանը: Հետ վերադարձրին, մենք այդ հողի գրանցումը իրականացրինք: Մի որոշակի էլ հող ունեինք, որ ամրացված էր պաշտպանության նախարարության հոսպիտալին, հոսպիտալից էլ այդ հողը չափագրություն արեցինք, պաշտպանության նախարարությունը տվեց իր համաձայնությունը, եւ հիմա գրանցել ենք, հանձնել ենք պետական գույքի կոմիտեին եւ սպասում ենք, որ առաջիկա ամիսների ընթացքում շինարարական աշխատանքները կսկսվեն: Այն խոչընդոտները, որ ի հայտ եկան, մեր կողմից տեսանելի չէին: Նախագծերի ձեռքբերումն իրականացվել է, այս պահին հողի ձեռքբերման աշխատանքներն իրականացվել են, սպասում ենք ծրագրի մեկնարկին:

- Գեղարքունիքի մարզի սահմանամերձ գյուղերում քանի՞ հեկտար գյուղատնտեսական հողեր եւ արոտավայրեր են անցել ադրբեջանցիների հսկողության տակ:

- Վարելահողեր կամ մշակվող հողատարածքներ՝ ոչ մի մետր, արոտավայրերի եւ մնացածի մասով ես Ձեզ հստակ տվյալներ չեմ կարող ասել, կխնդրեի, որ Դուք դիմեք պաշտպանության նախարարություն, նախարարությունը կպատասխանի այդ հարցին, բայց որ մշակվող հողեր մնացել են էն մասում, էդպիսի բան գոյություն չունի:

- Մեզ այլ տեղեկություններ են հասել, նույն գյուղացիները ճիշտ հակառակն են ասում. մոտավոր հաշվարկներով՝ մոտ 20 հա վարելահող, խոտհարք Գեղարքունիքից անցել է թշնամուն: Նաեւ տեղեկություն ունենք, որ Գեղամաբակ, Այրք, Վերին Շորժա, Ներքին Շորժա եւ այլ գյուղերի ջրային ավազաններն ու ջրի բնական աղբյուրներն են հայտնվել ադրբեջանական վերահսկողության կամ դիտարկման ներքո: Գյուղերում ջրի հասանելիության լուրջ խնդիրներ են առաջացել:

- Դուք այնպիսի հարց եք ինձ տալիս, որի մասին համ չեմ ուզում հրապարակային խոսել, համ չեմ ուզում, որ Ձեր հարցը մնա հրապարակային դաշտում ու հետագայում այլ կերպ ընկալվի: Բայց ես կասեմ՝ բոլոր այն ջրաղբյուրներն ու ջրավազանները, որոնք սպասարկում են մեր բնակավայրերին, 100%-ով սպասարկվում են մեր համայնքների կողմից: Համայնքային այն աշխատողը, որը զբաղվում է ջրավազանների մաքրմամբ կամ քլորացմամբ, իրենք իրենց աշխատանքները կարողանում են Ձեր նշած ջրավազաններում 100%-ով իրականացնել: Ջրի խնդիր ունենք այդ բնակավայրերում, ջրի խնդիրը կապված չէ Ձեր նշած հարցի հետ, ջրի խնդիրը կապված է նախորդ դարից մնացած խողովակաշարերի քայքայված լինելու հետ: Այս տարիների ընթացքում 80 հազար գծամետր ջրագիծ ենք կառուցել: Նաեւ այդ բնակավայրերում ենք այդ ջրագծերը կառուցել: Ջրի խնդիրը, որպես առաջնահերթություն մեզ համար, մենք լուծելով առաջ ենք գնում եւ 4069 գծամետր միայն 25 թվականին ենք ջրագիծ կառուցել: Մենք ունենք ծրագրեր, Ձեր նշած բնակավայրերից մեկում 2024 թվականին կանգնել է եւ չի իրականացվել շինարարի անբարեխիղճ լինելու պատճառով: Վստահ եմ, որ 2026 թվականին այդ ծրագիրն ավարտին կհասցնեն, եւ մեր հայրենակիցները խմելու ջրով ապահովված կլինեն: Ունենք բնակավայրեր, որտեղ գրաֆիկով պայմանական ոչ թե 24-ժամյա ջրամատակարարում է իրականացվում, այլ գրաֆիկով են ջուր տրամադրում՝ 18 ժամ, 12 ժամ: Առաջիկայում այդ բնակավայրերի օրվա կարգավորիչ ջրավազանների խոշորացման եւ նոր ջրաղբյուրներից ջուր հասցնելու ծրագիր էլ ենք իրականացնելու, որպեսզի այդ բնակավայրերում այդ գրաֆիկը հասցնենք 24 ժամվա:

փուլում են ԲԿ-ի կառուցման աշխատանքները:

- Իհարկե, այդ նախագիծն արդեն կա, մենք այդտեղ հողի հետ կապված խնդիր ունեցանք: Այն տարածքում, որտեղ որ ցանկանում էինք ԲԿ-ն կառուցել, պարզվեց, որ այդ տարածքից ժամանակին ինչ-որ անձինք ինչ-որ ճանապարհներով հողից մի որոշակի մաս գրանցել էին իրենց անունով, եւ այդ քաղաքացիները Հայաստանում չէին գտնվում: Մենք փորձեցինք իրենց հետ կապ հաստատել, իրենց որոշակի ֆինանս առաջարկել, որպեսզի հրաժարվեն, չգնանք այլ ճանապարհներով՝ դատական պրոցեսի մեջ չմտնենք: Ավելի լավ է արագ

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

«Ֆուռերը» կաբելները կտրել են՝ ճանապարհը փակվել է

Փետրվարի 12-ի առավոտյան ժամը 10.40-ի սահմաններում Բագրատաշենի մաքսակետ տանող ճանապարհին երթեւեկող «ֆուռերը» կտրել էին մեծ թվով մալուխներ: Բագրատաշենի վարչական ղեկավար Սարգիս Անտոնյանը մեզ ասաց, որ պատճառն այն է եղել, որ մալուխներով հեռասյունը թեքված է եղել, այդ պատճառով մեծ բեռնատարները չեն կարողացել բախումից խուսափել եւ կտրել են լարերը: Դեպքից հետո, ճանապարհին թափված կաբելների պատճառով, կարճ ժամանակով Հայաստան մտնող ավտոճանապարհը փակվել է, ավտոմեքենաների խցանում է առաջացել: Վնասվել են նաեւ ինտերնետային կապն ապահովող կաբելները, դեպքից մոտ 2 ժամ անց ժամանել են ինտերնետային կապի մասնագետները, որ վերականգնեն կապը:

ՍԱՀՄԱՆ ԴԱՐՁԱԾ ԿԻՐԱՆՑՈՒՄ ԱԳՐՈԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ ԵՆ ԶԱՐԳԱՑՆՈՒՄ

2025-ին Տավուշի մարզպետարանը հայտնել է, որ Կիրանց բնակավայրի եւ հարակից տարածքների զարգացման նպատակով Ֆրանսիայի Օ-դը-Սեն դեպարտամենտի հետ համատեղ կազմվել է ագրոզբոսաշրջության ծրագիր եւ ներկայացվել դոնոր կազմակերպության քննարկմանը: Ծրագիրը հաստատվել է: Հունվարի 29-ին Տավուշի մարզպետի աշխատակազմին տեղեկատվական հարցում եմ արել. «Որքա՞ն է ծրագրի արժեքը, ե՞րբ է այն իրականացվելու, ո՞ւմ կողմից, ի՞նչ քայլեր եւ արդյունքներ են լինելու»: Աշխատակազմից պատասխանել են. «ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի եւ Ֆրանսիայի Օ-դը-Սեն դեպարտամենտի միջեւ կնքված 2025-2029 թթ. Ապակենտրոնացված համագործակցության համաձայնագրի շրջանակում, Ֆրանսիայում Եվրոպայի եւ արտաքին գործերի նախարարության ֆինանսական աջակցությամբ, 2026 թ. հունվարին մեկնարկել է առաջին ծրագիրը՝ «Ագրոզբոսաշրջության ռազմավարության իրականացումը՝ որպես Տավուշի մարզպետի աշխատակազմի եւ Օ-դը-Սեն դեպարտամենտի ապակենտրոնացված համագործակցության բաղադրիչ»: Ծրագիրը մշակվել եւ ներկայացվել է Տավուշի մարզպետի աշխատակազմի կողմից, որը կիրականացվի «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի հետ համագործակցությամբ: Ծրագրային գործողությունների հիմնական ուղղություններն են՝ ստեղծել Տավուշի մարզի ագրոզբոսաշրջության ցանց, աջակցել ագրոզբոսաշրջային տնտեսություններին մեթոդական, ֆինանսական եւ հաղորդակցության գործիքներով, նպաստել Տավուշի մարզի այցելավայրեր կառավարման կազմակերպության կարողություններին զարգացմանը: Ծրագրի նախնական տարբերակը քննարկվել է դեռեւս 2024 թ. մայիսին՝ Օ-դը-Սեն դեպարտամենտի պատվիրակության Տավուշի մարզ կատարած այցի ժամանակ, որի ընթացքում, ի թիվս այլ հարցերի, կարեւորվել են նաեւ սահմանամերձ բնակավայրերի տնտեսական զարգացման հնարավորությունները»:

Կիրանցում ագրոբիզնես զարգացնելու ի՞նչ հնարավորություններ կան, երբ 2024-ին սահմանազատման անվան տակ Կիրանցից շուրջ 15 հեկտար հող Ադրբեջանին հանձնելու հետեւանքով նվազել են գյուղատնտեսությամբ զբաղվելու հնարավորությունները, արոտավայրերի նվազելու հետեւանքով պակասել է գյուղում պահվող խոշոր եղջերավոր անասունների թիվը: Այժմ Կիրանցում ընդամենը 10 հեկտար աշնանացան է արվել: Կիրանցի վարչական ղեկավար Կամո Շահինյանը հայտնեց, որ պետական աջակցությամբ 16 կամ 21 միլիոն դրամ արժեքով 54 առանձնատուն է կառուցվել, որի տերերի մոտ 80 տոկոսը Կիրանցի բնակիչ են: 5-6 տանն արդեն ապրում են: Կիրանցում պետական ֆինանսավորմամբ ոռոգման եւ խմելու ջրերի համակարգերն են արդիականացվում, որից հետո մոտ 70 հեկտար հող ոռոգելի կդառնա: Գյուղում արտեզյան ջրերի մաքրման կայաններ են կառուցվել, օրվա կարգավորիչ ջրամբար:

Մինչդեռ Կիրանցում ագրոբիզնեսից ավելի արդյունավետ կլինի դեպի հնամենի վանքեր զբոսաշրջությունը: Կիրանցի շրջակա անտառներում են գտնվում Կիրանց, Առաքելոց, Դեղձնուտի եւ Սամսոնի հնամենի վանքերը, որոնք բոլորն էլ գտնվում են կիսավեր վիճակում: Բայց սահմանին գտնվող Սուրբ Երրորդություն եկեղեցու նորոգումն ավարտին է մոտենում: 12-13-րդ դարերի Դեղձնուտի վանքը միջնադարյան հայ ճարտարապետության արժեքավոր հուշարձաններից է: Կիրանցի վանքը կանգուն է, սակայն վանքի լանջերին բուսնած ծառեր կան, որոնք քայքայում են շինության պատերը: Կիրանցից Առաքելոց վանք կարելի է գնալ մարդատար մեքենաներով: Սակայն Կիրանցից մոտ 10 կիլոմետր հեռավորությամբ գտնվող մյուս հնամենի վանքեր կարելի է հասնել բարձր անցողունակությամբ ավտոմեքենաներով կամ բեռնատարներով: Անհրաժեշտ է գոնե այդ վանքեր տանող ճանապարհները բարեկարգել, իսկ վանքերը՝ նորոգել:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԵՐԺՈՒՄ

ՄՆԱՑ, ՈՐ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ՕԳՏԻՆ ՔՎԵԱՐԿԵԼԸ ՔՐԵԱԿԱՆԱՑՆԵՆ

Փաշինյանը սիրում է մի քանի քայլանի կոմբինացիաներ, բեմականացված միջոցառումներ. փետրվարի 11-ին նախ հանձնարարեց, որ Քննչական կոմիտեն խուզարկություններ եւ ձերբակալություններ իրականացնի Վաղարշապատ համայնքում, մարդկանց մեղադրեցին քաղաքացիների ընտրական իրավունքի իրացմանը խոչընդոտելու եւ սահմանափակելու մեջ, տասնյակի չափ ընդդիմադիրներ ձերբակալվեցին: Քննչական կոմիտեն ինչ-որ անհասկանալի ձայնագրություն հրապարակայնացրեց, որտեղ մարդիկ իրենց կողմնակիցներին կոչ են անում գնալ ընտրությունների եւ քվեարկել իրենց նախընտրած թեկնածուի օգտին: Ստացվում է, որ եթե մարդը քվեարկում է կամ կոչ է անում քվեարկել ոչ ՔՊ-ական թեկնածուի օգտին, արդեն քրեական հանցագործ է: Մի քանի ժամ անց Նիկոլ Փաշինյանն իր ենթակա Լիլիթ Մինասյանի մասնակցությամբ մեկ այլ բեմական միջոցառում կազմակերպեց ԱԺ-ում: Նախ, նա Մինասյանի ձեռքը տվեց հարցերի մի ցուցակ, որը վերջինս հազիվ էր կարողանում կարդալ, հետո սկսեց պատասխանել իր իսկ հարցերին: Այս ամբողջ բեմական միջոցառման իմաստն այն էր, որ Փաշինյանը պետք է հայտարարեր, թե ինքն ընտրություն կեղծող չէ, չնայած բոլորը գիտեն, որ ինքը երբեք լեգիտիմ իշխանություն չի ունեցել, իսկ 18-ին իշխանությունը բռնազավթել է հակասահմանադրական հեղաշրջման միջոցով:

Եվ այսպես. Քննչական կոմիտեն կալանավորեց մեկ տասնյակի չափ ընդդիմադիր գործիչների, որոնք 2025 թ. նոյեմբերի 16-ին տեղի ունեցած Վաղարշապատ խոշորացված համայնքի ընտրությունների ժամանակ ուղղորդել էին ընտրողներին: Նախ, այդ ձայնագրությունները վկայում են մի բան. Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացի, որը քաղաքական ակտիվություն է դրսեւորում, որն ինչ-որ կերպ ներգրավված է քաղաքական եւ ընտրական գործընթացներում, ենթարկվում է տոտալ հետապնդման, նրան գաղտնալսում են, նրա տեղաշարժը եւ անձնական կյանքը ենթարկվում են վերահսկման: Երկրորդ. Հայաստանում որեւէ մեկն իրավունք չունի զբաղվել քաղաքական գործունեությամբ, որովհետեւ դա արդեն իսկ քրեական հանցագործություն է. եթե մարդը հեռախոսով իր ընկերոջը կամ ծանոթ-բարեկամին ասում է՝ գնա ընտրատեղամաս եւ քվեարկի այս կամ այն թեկնածուի օգտին, նա քրեորեն հետապնդելի արարք է կատարում, եթե, իհարկե, դա չի անում իշխող կուսակցության կամ նրանից ստրկական կախվածություն ունեցող կուսակցությունների օգտին:

Բայց ինչո՞ւ էր բեմականացումը կազմակերպվել հենց փետրվարի 11-ին, չէ՞ որ Վաղարշապատի ընտրությունները տեղի էին ունեցել երեք ամիս առաջ, եւ այդ ձայնագրությունները Քննչական կոմիտեն ուներ երեք ամիս առաջ: Միայն թե երեք ամիս առաջ խորհրդարանական ընտրությունների օրը պաշտոնապես նշանակված չէր, իսկ հիմա նշանակված է, եւ Փաշինյանը Քննչական կոմիտեի միջոցով եւ ԱԺ ամբիոնից հայտարարեց, որ ով իր ծանոթին, ընկերոջը, բարեկամին փորձի ուղղորդել, համոզել, որ նա քվեարկի ոչ ՔՊ-ի օգտին, ուրեմն քրեական հանցագործ է՝ անմիջապես կկալանավորվի: Փաշինյանն այս ներկայացումները հատուկ էր կազմակերպել նախընտրական շրջանում՝ հասարակությանը վախ եւ սարսափ ներշնչելու համար:

Խոսելով իր կողմից ընտրակեղծարարության կազմակերպման հնարավորության մասին՝ նա ասում է. «Մենք մեր ձեռքերը կկտրենք ընտրությունների… (չի շարունակում, որովհետեւ գիտի, որ ընտրությունները մեկ անգամ չէ, որ կեղծել է, ու իր ձեռքն էլ ինքը չի կտրի՝ Ա. Բ.): Դա ո՞ւմ մասին են խոսում, ես ուզում եմ հասկանամ: 2018 թվականից հետո Հայաստանում քանի՞ ընտրություն է կեղծվել, Երեւան քաղաքում ընտրությունների արդյունքները վճռվել են 70, թե 120 քվեաթերթիկի վրա: Էդ ասողները էդ 120 քվեաթերթիկը կուտեին: Նրանք, ովքեր մեզ ասում են, որ մենք կարող է ընտրություն կեղծենք, նրանք ոչ միայն կուտեին, այլ այդպիսի հազարավոր քվեաթերթիկներ կերել են: Էդ մարդիկ հիմա եկել են, մեզ ասում են, որ մենք պատրաստվում ենք ընտրություն կեղծել»:

Երբ մարդը մի անգամ ստում է, եւ նրա սուտը բացահայտվում է, նրա որեւէ խոսքն այլեւս արժանահավատ չի կարող լինել: Փաշինյանը մեկ անգամ չէ, հազար անգամ է ստել, ու հազար անգամ նրա սուտը բացահայտվել է, ընդհանրապես հնարավոր չէ հիշել մի դեպք, երբ նա ճիշտ բան ասած լինի: Ինչ վերաբերում է ընտրություն չկեղծելուն, ապա Փաշինյանի իշխանության օրոք բազմաթիվ ընտրություններ են կեղծվել, մենք կարող ենք տասնյակ օրինակներ բերել. Ալավերդիում ընտրողները քվեարկել էին «Ապրելու երկիր» կուսակցության օգտին, քաղաքապետ էր ընտրվել այդ կուսակցության ներկայացուցիչ Արկադի Թամազյանը, բռնաճնշումների արդյունքում Փաշինյանը քաղաքապետ կարգեց իր ենթակային: Վանաձորում քաղաքացիները քվեարկել էին Մամիկոն Ասլանյանի օգտին, բայց նա այդպես էլ քաղաքապետ չաշխատեց: Գյումրիում քաղաքապետ էին ընտրել Վարդան Ղուկասյանին, բայց նա այժմ քաղաքապետ չէ: Բերդում քվեարկության արդյունքները կեղծվեցին, եւ քաղաքապետ Հարություն Մանուչարյանին ստիպեցին հրաժարվել մանդատից: Փարաքար համայնքում համայնքապետ էր ընտրվել Վալոդյա Գրիգորյանը, բայց նրան սպանեցին: Մասիսում քաղաքապետ էր ընտրվել ՀՀԿ անդամ Դավիթ Համբարձումյանը, բայց նա կալանավորված է եւ հիմա քաղաքապետ չէ: Այս ցանկը կարելի է շարունակել, եւ արդյունքում կպարզվի, որ Հայաստանում ընտրություն ասվածը կեղծ, անիմաստ միջոցառում է. մարդիկ ում ընտրում են, նա կամ կալանավորվում է, կամ՝ սպանվում: Ինչ վերաբերում է Երեւանի քաղաքապետի ընտրություններին, ՔՊ-ն այդ ընտրություններում չի պարտվել 70 կամ 120 ձայնով. ՔՊ-ն քաղաքապետի պաշտոնը զավթել է «Հանրային ձայն» կուսակցության ավագանու անդամներին գողանալով, մարդիկ, ովքեր ընտրություններին մասնակցել են թունդ ընդդիմադիր կարգախոսներով, ընտրություններից հետո իրենց ձայնն են տվել իշխանության թեկնածուին: Բայց ազգային անվտանգությունը չի ձայնագրել, թե ինչպես են նրանց սպառնում կամ պարտադրում քվեարկել ՔՊ-ի թեկնածուի օգտին, քանի որ քրեական հանցագործություն է ընդդիմադիր լինելը, ընդդիմության օգտին քվեարկելը, իսկ մնացածն օրենքի շրջանակներում է:

Քանի դեռ Փաշինյանն իշխանություն ունի եւ կարող է հրահանգներ տալ ԱԱԾ-ին կամ Քննչական կոմիտեին, նա ճիշտ է եւ արդար, բայց հենց այդ իշխանությունը կորցնի, կպարզվի, որ նա աշխարհի տակ մինչ այժմ գոյություն ունեցած ամենամեծ հանցագործն ու չարագործն է: Նա դրա մասին գիտի եւ դրա համար էլ փորձում է ամեն գնով պահել իշխանությունը, բոլոր հանցագործներն էլ փախչում են արդարադատությունից, նրա պահվածքի մեջ ոչ մի օրիգինալ բան չկա:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԱՅՍՈՒՀԵՏ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԱՐԳԵԼՎԵԼՈՒ Է ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆԸ

«Մենք մի անգամ չենք ասել, որ մենք մեր ձեռքերը կկտրենք, բայց ընտրությունները չենք կեղծի»,- անընդհատ ասում է վարչապետի պաշտոնը զբաղեցնող Նիկոլը: Սա այն քիչ դեպքերից է, երբ կարելի է համաձայն լինել վերը նշված անձի հետ: Քանի որ դա նրան անհրաժեշտ չէ: Իսկ թե ինչու՝ կպարզաբանի ընտրական գործընթացին առնչություն ունեցող որոշ հանգամանքների ներկայացումը:

Սկսենք սկզբից, այսինքն՝ 2018 թվականի մայիսի 8-ից, երբ վերջինս Ազգային ժողովի կողմից ընտրվեց կամ նշանակվեց՝ դա էական չէ, վարչապետ: Այդ օրը կեղծելու կարիք չկար, քանի որ թե՛ մայրաքաղաքում եւ թե՛ ողջ հանրապետությունում ժողովուրդը ոտքի էր կանգնել՝ կաթվածահար անելով կյանքը: Թե ինչու էր այդպես ստացվել՝ դա այլ հարց է: Նույն թվականի դեկտեմբերին ԱԺ ընտրությունը կեղծելն իմաստ չուներ, քանի որ խաբված ժողովուրդը դեռեւս գտնվում էր հեղափոխական էյֆորիայի ու միաժամանակ թմբիրի մեջ: 2021 թվականի ԱԺ արտահերթ ընտրությունը եւս մեծ հաշվով կեղծելու կարիք չկար, քանի որ այդ անգամ էլ ժողովուրդն ընկել էր շոկի մեջ՝ պայմանավորված 44-օրյա պատերազմի խայտառակ պարտությամբ եւ պատերազմի ծնունդ՝ հսկայական զոհերի ու հաշմանդամների առկայությամբ:

Անցնենք տեղական ընտրություններին: Կարելի է համարձակ պնդել, որ տեղական ընտրություններին հիմնականում հաղթանակ է ձեռք բերվել վարչական ռեսուրսի չարաշահման շնորհիվ, ինչպես նաեւ ընդդիմադիր ուժերի ներկայացուցիչների նկատմամբ ոստիկանական բռնաճնշումներ կիրառելով: Բազմաթիվ վայրերից էլ ստացվել են տեղեկություններ՝ ընտրողներին գումարներ կամ բնամթերք բաժանելու մասին: Իսկ այն համայնքներում, որտեղ այդ ամենն օգուտ չի տվել, ու ընտրվել են ընդդիմադիրները, նրանք հայտնվել են բանտերում: Իսկ եթե դա չի ստացվել, դրանց ավագանու անդամներից ոմանց կաշառքով կամ իրավական ճնշումներով եւ կամ երկուսը միասին, քաշել են իշխանության կողմը: Դե ասեք՝ էլ ի՞նչ կարիք կար ընտրողի քվեն բացահայտ կեղծելու, եթե նույն արդյունքին կարելի էր հասնել այլ ճանապարհով: Այնպիսի եղանակներով, ինչը համարյա թե երբեք չի կիրառվել նախկինների կողմից:

Շուրջ 4 ամսից տեղի է ունենալու ԱԺ հերթական ընտրությունը: Դրան գործող իշխանությունը նախապատրաստվում է մի շարք հարթություններով: Առաջին. ներկուսակցական ցուցակների կազմումը, ինչն անընդհատ լուսաբանվում է մամուլի կողմից: Իսկ դա արդեն դրական երեւույթ է ՔՊ-ի համար, քանի որ լրացուցիչ գովազդ է ապահովում: Երկրորդ. միջազգային բազմաթիվ արձագանքների, ինչպես նաեւ ուղղակի միջամտությունների առկայությունը: Մեղադրելով գոյություն չունեցող ռուսական միջամտությունը՝ Եվրամիությունը 15 միլիոն եվրո է ներդնում գործող իշխանության վերարտադրության նպատակով, ինչպես դա տեղի ունեցավ անցյալ տարի Մոլդովայի խորհրդարանական ընտրությունում: Երրորդ. նույն՝ մոլդովական սցենարով ընդդիմադիր կուսակցությունների ակտիվ ներկայացուցիչների նկատմամբ ծավալված ոստիկանական բռնությունները: Չորրորդ, հինգերորդ եւ այլն՝ յուրաքանչյուր առանձին վայրում տեղական առանձնահատկություններով պայմանավորված:

Որպես օրինակ վերցնենք Վաղարշապատի համայնքային ընտրությունից ամիսներ անց «Հաղթանակ» խմբակցության ներկայացուցիչներից շուրջ մեկ տասնյակի կալանավորման հանգամանքը: Այս գործի ողջ տրագիկոմեդիան այն է, որ այդ անձանց, ըստ փաստաբան Ալեքսանդր Կոչուբաեւի, կալանավորել են «իբր քարոզչություն իրականացնելու եւ ընտրողների կարծիքի վրա ազդելու» պատճառով: Նրան, ի դեպ, արգելել են ներկա լինել հարցաքննությանը: Ստացվում է, որ այսուհետ Հայաստանում ոստիկանությունն է թույլատրելու կամ արգելելու նախընտրական ժամանակահատվածում քարոզչություն իրականացնելը: Իսկ դա արդեն հայաստանյան աբսուրդի հերթական դրսեւորումն է: Այնպես որ, եթե կարելի է կեղծել ընտրությունների արդյունքները բազմաթիվ այլ եղանակներով, ապա ի՞նչ կարիք կա, որ դա արվի ուղղակի ընտրողի քվեն կեղծելով:

ՀԳ. *Եթե դատավորն ու հարկադիրը կարող են որոշումներ կայացնել իրենց չվերաբերող հարցերով (հիշենք կարգալույծ հոգեւորականների դատական պատմությունը), ապա, իսկապես, նախընտրական ժամանակահատվածում ոստիկանությունն ինչո՞ւ չի կարող արգելել քարոզչություն իրականացնելը:*

Վախթանգ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՈՒԶՈ՞ՒՄ ԵՆՔ ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼ, ԹԵ՞ ԱՅՍՏԵՂԻՑ-ԱՅՆՏԵՂԻՑ COPY-PAST ԾՐԱԳՐԵՐ ԵՆՔ ՄՇԱԿՈՒՄ

*«Հրապարակի» զրուցակիցը տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Թաթուլ Մանասերյանն** է:*

- Տարին, այդ թվում՝ տնտեսական տարին, ընթացքի մեջ է. ի՞նչ կանխատեսումներ ունեք 2026-ի հետ կապված:

- Կարեւոր է նկատել, որ 2026 թվականը տարբեր առումներով դժվար կանխատեսելի տարի է: Դա, նախ, պայմանավորված է աշխարհաքաղաքական լուրջ փոփոխություններով եւ հատկապես մեր տարածաշրջանի զարգացումներով՝ ներառյալ Թուրքիայի հետ սահմանի հնարավոր բացման հանգամանքը, Ադրբեջանի հետ առեւտրատնտեսական կապերի հնարավոր զարգացումները: Բայց նաեւ չմոռանանք մի շատ կարեւոր հանգամանք, որ 2026 թվականը նախընտրական տարի է, եւ կարող են լինել անսպասելի զարգացումներ՝ իշխանությունների կողմից պատրանք ստեղծելու, որ տնտեսությունն ավելի արագ տեմպերով է աճում, քան՝ ոչ միայն նախորդ տարիներին, այլեւ, այսպես կոչված, նախկին իշխանությունների օրոք: Այնպես որ, 2026-ի վերաբերյալ կանխատեսումներ անելը, թերեւս, ամենից դժվար եւ ամենաանշնորհակալ խնդիրն է:

- ՀՀ ԿԲ-ն, օրինակ, այս տարվա համար կանխատեսում է ՀՆԱ-ի 6,3-4,1 տոկոս աճ, այնուհետեւ՝ 2027 թվականին՝ 4,9-5,3 տոկոս՝ ակնկալելով նաեւ արտաքին առեւտրի դինամիկայի բարելավում: Գլխավոր դրամատան գնահատմամբ, ՀՆԱ-ի բացարձակ մեծությունը 2026 թ. կաճի մինչեւ 12-12.3 տրիլիոն դրամ: Հերթական «թվանկարչությունն» է, թե՞ իրատեսական ցուցանիշ է:

- Իհարկե, տարբեր կանխատեսումներ արել է կառավարությունը եւ Կենտրոնական բանկը՝ նույնպես, բայց դրանք հիմնականում կապված են Արժույթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային բանկի եւ այլ միջազգային կառույցների կանխատեսումների հետ: Առանձին վերցրած, եթե ըստ տնտեսական տարբեր ճյուղերի դիտարկենք, ապա չկա ծրագրված կամ համապարփակ հայեցակարգային մոտեցում, թեեւ 2026 թ. հունվարի 8-ին կառավարությունն ընդունել է, այսպես ասած, պարադիգմի փոփոխության փաստաթուղթ, բայց պարզ է, որ նման ընդհանուր դրույթները, որոնք արտացոլված են փաստաթղթում, բացարձակապես չեն բխում Հայաստանի տնտեսության առանձնահատկություններից, եւ դրա իրատեսականությունը եւս հարցականի տակ է:

- ՀՆԱ-ի կանխատեսման հաշվարկը որքանով է հաշվի առնում ռիսկերի եւ անորոշությունների գործոնները: Արդյո՞ք այդ գործոնները կարող են տնտեսության մեջ ձեւավորել ավելի բարձր գնաճի միջավայր:

- Այստեղ կարեւորը ոչ միայն գնաճն է, որը, իհարկե, կարող է ավելին լինել, քան կանխատեսվում է: Բայց զարգացումները, բնականաբար, հատկապես առաջին անհրաժեշտության ապրանքների մասով, կարող են ավելի բարձր լինել, որովհետեւ ՀՀ տնտեսությունը գտնվում է տուրբուլենտ վիճակում, բավականին շատ են գնաճային ճնշումները, բայց քանի որ սպառողական գների ինդեքսը հաշվարկվում է շուրջ 500 ապրանքների եւ ծառայությունների համար, դա խաբուսիկ պատկեր է ստեղծում, որ միջինացված ցուցանիշը 3+-1,5 տոկոսի սահմաններում կարող է պահպանվել: Իհարկե, նախորդ տարիներին եւս դա ներկայացվել է հանրությանը, բայց աղքատության բարձր մակարդակ ունեցող երկրում շատ ավելի կարեւոր է հանրությանը ներկայացնել առաջին անհրաժեշտության ապրանքների գնաճը, որը 2025 թվականին նույնպես երկնիշ թվերով աճ է ունեցել:

- Հունիսին նախանշված քաղաքական գլխավոր իրադարձությունը՝ խորհրդարանական ընտրությունները, ըստ Ձեզ, ի՞նչ ազդեցություն կարող են ունենալ տնտեսական իրավիճակի վրա, անկախ նրանից, թե քաղաքական որ ուժը կանցնի ԱԺ, կամ՝ կվերարտադրվի՞ արդյոք փաշինյական ռեժիմը, թե՝ ոչ:

- Այո, տնտեսության վրա ազդեցությունը հաստատ պայմանավորված է նրանով, թե որ քաղաքական ուժը կունենա մեծամասնություն, որովհետեւ մինչ օրս որեւէ պատասխանատվություն չկա տնտեսության վերաբերյալ. կցկտուր տվյալներ են հրապարակվում, բայց այդպես էլ պարզ չի դառնում՝ ուզո՞ւմ ենք կառուցել ազգային տնտեսություն, թե՝ ոչ, թե՞ իներցիոն ուժով, այստեղից-այնտեղից ինչ-որ ծրագրեր կարճ, էպիզոդիկ իրականացնելով՝ ընդհանուր առմամբ, դա փորձում ենք ներկայացնել որպես տնտեսական աճ կամ տնտեսության զարգացում: Բնականաբար, խոստումներ են լինելու, նոր «նկարած» ծրագրեր, որոնք copy-past սկզբունքով այլ տեղերից, այլ երկրներից պետք է ընդօրինակեն: Բայց որեւէ մեկը քաղաքական դաշտում այսօր հստակ պատկերացում չունի, թե ինչից է բաղկացած Հայաստանի տնտեսությունը: Չմոռանանք, որ անցած տարիների ընթացքում մենք կորցրել ենք ազգային հարստության մի զգալի մասը, որն Արցախի Հանրապետությունն էր նաեւ իր մեջ ներառում, եւ հանքերը, եւ հացահատիկը, եւ էներգետիկ ռեսուրսները, եւ բազմաթիվ այլ բաներ, որից Հայաստանի Հանրապետությունը զրկվել է: Մենք ունենք որակապես նոր իրավիճակ, ունենք տարածաշրջանային նոր զարգացումներ, եւ դրանք հաշվի չառնելը, բնականաբար, չի կարող ժողովրդին շոշափելի արդյունքներ բերել:

Նյութերը՝
Արա ԱԼՈՅԱՆԻ

Օդային տարածքը փակել են՝ փորձարկման համար

Միացյալ Նահանգներում անօդաչուների դեմ պայքարի համար լազերային նոր զինատեսակ են փորձարկում, եւ այդ փորձարկումների համար փակվել է Նյու Մեքսիկո նահանգի հարավային հատվածի, ինչպես նաեւ՝ Տեխաս նահանգի Էլ-Պասոյի օդային տարածքը: Այս մասին հայտնում է Associated Press լրատվական գործակալությունը: Պենտագոնը լազերային նոր զինատեսակը փորձարկում է՝ մեքսիկական թմրավաճառային ցանցերի դեմ պայքարելու համար, քանի որ վերջիններս թմրանյութերի խմբաքանակները կարողանում են սահմանն անցկացնել անօդաչու սարքերի՝ ԱԹՍ-ների միջոցով: Ընդ որում, համաձայն հաղորդման, Պենտագոնն այդ փորձարկումները սկսել է առանց Ավիացիոն դաշնային վարչության հետ համաձայնեցնելու, ինչը երկու գերատեսչությունների միջեւ որոշակի լարվածություն է առաջացրել: Դեռեւս վերջնական տեղեկություն չկա, թե արդյոք լազերային փորձարկումն իրականացվե՞լ է, եւ եթե՝ այո, ապա ի՞նչ արդյունքներով է այն ավարտվել:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ի՞ՆՉ ԱՐՁԱՆԱԳՐԵՑ ՎԵՆՍԻ ԱՅՑԸ ԵՐԵՎԱՆ ԵՎ ԲԱՔՈՒ. ԿՐԵՄԼՈՒՄ ՀԻԱՍԹԱՓՎԱԾ ԵՆ

ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսի այցը Հարավային Կովկաս՝ Հայաստան եւ Ադրբեջան, ընդգծեց երկու գործոն՝ Վաշինգտոնի անտարբերությունը Մոսկվայի հայտարարած ազդեցության ոլորտների նկատմամբ եւ Կրեմլի թուլացող դիրքը տարածաշրջանում: Ըստ ամերիկյան Եվրոպական քաղաքականության վերլուծության կենտրոնի (CEPA)՝ Վենսի այցը ցույց է տալիս, որ, չնայած Թրամփի վարչակազմի՝ Ռուսաստանի հետ հարաբերությունները բարելավելու ցանկությանը, Միացյալ Նահանգները չի հրաժարվում Հարավային Կովկասում՝ տարածաշրջանում, որը Կրեմլը ավանդաբար անվանում է իր «մերձավոր արտասահման», իր ակտիվ ներկայությունից:

Նշվում է, որ Մոսկվայի արձագանքը այցին բացահայտ էր եւ ուղղակի: Պետական «Կոմերսանտ» թերթն իրավիճակը բնութագրել է որպես «հիասթափեցնող եւ անօգնականության զգացում առաջացնող»՝ Հարավային Կովկասում Ռուսաստանի թուլացող դիրքն ուղղակիորեն կապելով Ուկրաինայի դեմ պատերազմին նրա մասնակցության հետ: Այնուամենայնիվ, CEPA-ն ընդգծում է, որ ամերիկյան հավակնությունները չպետք է չափազանցնել: ԱՄՆ-ն չի պլանավորում ռազմական ներկայություն այս տարածաշրջանում. նրա նպատակներն ավելի շատ տնտեսական են, քան աշխարհաքաղաքական, չնայած, ինչպես Ռուսաստանը լավ հասկանում է, մեկը կարող է հանգեցնել մյուսին:

«Միեւնույն ժամանակ, ԱՄՆ-ն ձգտում է ամրապնդել իր դիրքերը ռուսական ազդեցության ավանդական ոլորտներում՝ առաջ շարժվելով այնպիսի ոլորտներում, ինչպիսին է խաղաղ միջուկային համագործակցությունը: Հայաստանը եւ ԱՄՆ-ն ստորագրել են, այսպես կոչված, «123» համաձայնագիրը՝ միջուկային էներգիայի համագործակցության վերաբերյալ, որը նախատեսում է կամ փոխարինել խորհրդային դարաշրջանի Մեծամորի ատոմակայանը, կամ կառուցել մոդուլային ռեակտորներ՝ այն լրացնելու համար, ինչը տեխնոլոգիա է, որում ԱՄՆ-ն համաշխարհային առաջատար է: ՀՀ կառավարության որոշումը հարված էր Ռուսաստանի պետական միջուկային էներգետիկ ընկերությանը՝ «Ռոսատոմ»-ին»,- ասվում է հոդվածում: Հեղինակը նաեւ շեշտում է, որ միջուկային արդյունաբերությունը Ռուսաստանի հզորության պրոյեկցիայի առանցքային տարրն է հետխորհրդային տարածքում: CEPA-ն ընդգծում է, որ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության գործընթացի առաջընթացը ոչ պակաս նշանակալի է եղել: Վաշինգտոնում օգոստոսյան գագաթնաժողովից հետո ԱՄՆ-ն ամրապնդեց միջնորդի իր դերը՝ հաջողությամբ դուրս մղելով Ռուսաստանին ավանդական կարգավորման ձեւաչափից. «Հաշվի առնելով Բաքվի եւ Երեւանի կուտակված դժգոհությունները ռուսական քաղաքականության նկատմամբ՝ Վաշինգտոնն ընկալվում է որպես ավելի չեզոք եւ կանխատեսելի գործընկեր: Սա արտացոլում է ավելի լայն միտում՝ Ռուսաստանի նկատմամբ վստահության անկում՝ որպես տարածաշրջանում անվտանգության երաշխավոր: Մոսկվան դեռեւս չի ցուցադրել արդյունավետ արձագանքման ռազմավարություն: Նախորդ տարիներին Ռուսաստանի արձագանքը հետխորհրդային տարածքում Արեւմուտքի ակտիվությանը հաճախ ընդունվում էր ուժի կիրառման տեսքով, ինչպես տեղի ունեցավ Վրաստանում 2008 թվականին: Սակայն ներկայիս իրավիճակը սահմանափակում է նման գործիքները»:

«Թրամփի վարչակազմի մոտեցումը երկրորդ ժամկետում տարբերվում է ժողովրդավարացման եւ մարդու իրավունքների վրա նախկինում դրված շեշտադրումից: Կենտրոնական դեր է խաղում գործարքային տրամաբանությունը՝ ներդրումներ, էներգետիկա, ենթակառուցվածքներ եւ ուղղակի քաղաքական երկխոսություն: Այս պահին կենտրոնական թեման պարզ է. ԱՄՆ-ն ամրապնդում է իր դիրքերը Հարավային Կովկասում»,- եզրափակում է հոդվածագիրը:

ՏԵՍԱԿԱՆ

ՆՐԱՆՑ «ԾԱՅՐԱԳԱՎԱՌՈՒՄ» ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐՆ ԱՎԵԼԻ ԼԱՎ ԷԻՆ ԱՊՐՈՒՄ, ՔԱՆ ՁԵՐ «ԿԵՆՏՐՈՆՈՒՄ»

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի վերջին հայտարարությունը՝ «Հայաստանը մեր աչքի առաջ ծայրագավառից դառնում է կենտրոն», կրկին ցնցեց հանրությանը: Նա դա ասում է որպես կատարված փաստ: Բայց հարց է առաջանում՝ ո՞ր իրականության մասին է խոսքը: Որովհետեւ անգամ «վարդագույն ակնոց կրող» հայաստանցիներս մեր աչքով տեսնում ենք մի այլ գործընթաց. երկիրը գնալով կախված է դառնում արտաքին գործոններից, ներմուծումից, պարտքերից: Երբեմն տպավորություն է ստեղծվում, թե մենք ոչ թե կենտրոնի ենք վերածվում, այլ ինչ-որ մեկի ծայրագավառի: Եվ եթե «կենտրոն» բառը պետք է հնչի, ապա գոնե «համաշխարհային քաղաքակրթական կենտրոնի» իմաստով: Որովհետեւ տնտեսական հիմքն այդ բառին չի համապատասխանում: Եվ այստեղից ծնվում է վախը, որի մասին պետք է բաց խոսել:

Երկու տարբեր վախեր. սոցիալական ապահովության ոլորտից հնչած այն միտքը, թե թոշակառուներն ու նպաստառուները ծանր «բեռ» են պետության վրա, պատահական չէ: Դա համակարգի ներսում գոյություն ունեցող իրական հաշվարկի արտահայտություն է: Բայց այստեղ պետք է հստակեցնել՝ բեռն ո՞վ է: Ես վախենում եմ, որ մի օր մեր տնտեսությունն իսկապես այնքան կսմքի, կթուլանա, պարտքերի տակ կմտնի, որ երկիրն այլեւս չի կարողանա շնչել: Վախենում եմ, որ թոշակները կուշանան ոչ թե քաղաքական կամքով, այլ՝ անկարողությունից: Որ սոցիալական համակարգը կաթվածահար կլինի, որովհետեւ հիմքը չկա:

Իսկ իշխանությունը վախենում է այլ բանից: Նրանց վախը սոցիալական պայթյունն է, բունտը: Նրանց վախը իշխանությունը կորցնելն է, փողի հոսքերից կտրվելը, բյուջեն վերահսկելու հնարավորությունից զրկվելը, այն կոմֆորտը կորցնելը, որին սովորել են, եւ որն ապահովվում է բարձր աշխատավարձերով, պարգեւավճարներով ու հավելավճարներով, պետական լծակներով: Այս վախերը նույնը չեն: Ես վախենում եմ երկրի խեղդամահ լինելուց, նրանք՝ աթոռի կորուստից: Սա հուզական պնդում չէ: Սա հետեւություն է վերջին 8 տարվա տնտեսական կառուցվածքից:

Հայաստանում շուրջ 660 հազար թոշակառու կա: Մոտ 800 հազար մարդ աշխատում է: Բայց այդ աշխատողների զգալի մասը պետական ապարատում է, սպասարկման, առեւտրի, վարչական եւ վերահսկողական ոլորտներում: Իրական, արտահանվող, արժեք ստեղծող արտադրող շերտը սահմանափակ է: Այս կառուցվածքով սոցիալական համակարգը մշտապես ճնշման տակ է լինելու: Սա մաթեմատիկա է, ոչ թե քաղաքականություն: Եթե հաշվարկենք, ապա ստացվում է, որ երկրի բնակչության մոտ 400-450 հազար մարդ է զբաղված այնպիսի գործունեությամբ, որի արդյունքը վաճառվում է դրսում եւ երկիր է բերում տարադրամ: Եվ հենց այդ սահմանափակ արտադրական շերտի ստեղծած արժեքով է պահվում ամբողջ համակարգը՝ պետական ապարատը, սոցիալական վճարները, չաշխատող խավը, սպասարկման եւ վարչական ոլորտները: Ընդ որում, տարեցտարի աշխատողների ու թոշակառուների քանակական հարաբերակցությունն ավելի է վատթարանալու:

Ի՞նչ է արվում այս իրավիճակը փոխելու համար: Արդյոք արդյունաբերությունը դարձե՞լ է ազգային անվտանգության հարց: Ի՞նչ ռազմավարական ճյուղեր են դարձել առաջնային: Արդյոք ձեւավորվե՞լ է կրթություն-գիտություն-արտադրություն իրական շղթա: Փոխարենը մենք տեսնում ենք պետական պարտքի աճ, վարկերի ավելացում: Բյուջեի ճեղքվածքի պարբերական լրացում արտաքին միջոցներով: Վարկերի տոկոսների սպասարկման ահագնացող բեռ: Այո՛, բոլոր երկրներն ունեն պարտք: Բայց բոլոր երկրները չունեն այսպիսի կառուցվածքային թուլություն: Պարտքը վտանգավոր է դառնում այն ժամանակ, երբ այն չի վերցվում ապագային ուղղված ծրագրերի իրականացման համար, այլ վարկով պարզապես փակում են ընթացիկ ծախսերը՝ ծանր բեռ ավելացնում սերունդների ուսերին: Եթե պարտքը ներդրվում է արդյունաբերության մեջ, այն դառնում է զարգացում: Իսկ եթե պարտքը պահում է վարչական ապարատը եւ սոցիալական ճնշումը ժամանակավորապես մեղմում, այն դառնում է կախվածություն: Այսօր մենք տեսնում ենք երկրորդը: Եվ այստեղ է իրական վտանգը. իշխանությունը կարող է հեռանալ, բայց պարտքը մնալու է մեր երեխաների վզին: Նրանք կարող են պաշտոններ չզբաղեցնել վաղը, բայց տոկոսները շարունակելու են կուտակվել: Նրանք այսօր օգտվում են բարձր աշխատավարձերից, պարգեւավճարներից, պետական լծակներից: Իսկ վաղվա սերունդը վճարելու է այդպիսի կառավարման դիմաց: Որքան մարդը հեռանում է աղքատությունից, այնքան հաճախ կորցնում է աղքատին տեսնելու ունակությունը: Սա մարդկային հոգեբանություն է: Բայց պետական մակարդակում դա դառնում է բարոյական խնդիր:

Հիշենք վերստին. 1990-ականներին Հայաստանի արդյունաբերությունն ապահովում էր ՀՆԱ-ի շուրջ 40 տոկոսը: Այսօր՝ մոտ 15-18 տոկոս: Սա պարզապես անկում չէ: Սա տնտեսական ողնաշարը կոտրել է: Մենք ներմուծում ենք տեխնիկա, սարքավորումներ, մեքենաներ, սպառման ապրանքներ, սննդամթերք եւ այլն: Արտահանում ենք հիմնականում հանքահումք եւ ցածր մշակման արտադրանք: Այս կառուցվածքով հնարավոր չէ ապահովել երկարաժամկետ սոցիալական կայունություն: Խոստումներ եղան՝ հեռուստացույցներ, սառնարաններ, լվացքի մեքենաներ, ներմուծման փոխարինում, նոր արտադրություններ: Անցել է 8 տարի: Որտե՞ղ են դրանք: Ի՞նչ եղավ «արդյունաբերական հեղափոխությունը»: Եթե ութ տարվա ընթացքում արդյունաբերության մասնաբաժինը չի աճում, եթե տնտեսության կառուցվածքը չի փոխվում, եթե պարտքը մեծանում է, ապա սա արդեն ոչ թե ժամանակավոր դժվարություն է, այլ՝ կառավարման մոդել: Տուրիզմը կարող է արտարժույթ բերել, բայց այն չի կարող դառնալ համակարգի ողնաշար: Ռեստորաններով եւ խանութներով երկիր չեն կառուցում: Ծառայությունների ոլորտը կարող է ծաղկել միայն այն դեպքում, երբ կա արտադրական հզոր հիմք: Երբ այդ հիմքը չկա, սոցիալական վճարները դառնում են ծանրություն, թոշակառուն՝ «բեռ», բյուջեն՝ մշտական դեֆիցիտ, իսկ պարտքը՝ մշտական ուղեկից:

Չի կարելի խոսել ծայրագավառից «կենտրոն» դառնալու մասին, երբ երկրի արտադրական կարողությունը զրոյանում է: Չի կարելի սոցիալական լարվածությունը կանխել, եթե այդ լարվածության հիմքերը գնալով խորանում են: Եթե ութ տարվա ընթացքում արդյունքը սա է՝ պարտքի աճ, արդյունաբերության նահանջ, սոցիալական բեւեռացման խորացում, ապա հասարակությունն իրավունք ունի եզրակացնելու, որ խնդիրը ոչ թե աշխարհաքաղաքական պայմաններն են, այլ՝ կառավարման անճարակությունը, սխալ առաջնահերթությունները, այն միջավայրը, որտեղ պետական լծակները միայն որպես անձնական բարեկեցության աղբյուր են ծառայում: Երկիրը չի կարող անվերջ ապրել պարտքի հաշվին: Չի կարող անվերջ ձախողել արդյունաբերական քաղաքականությունը: Չի կարող անվերջ մեղադրել արտաքին հանգամանքներն ու ոչինչ չփոխել: Մի օր մենք իսկապես ծանր բեռի տակ կընկնենք եւ այլեւս չենք կարողանա շնչել: Իսկ եթե այդ օրը գա, «կենտրոն» բառը ոչ մեկին չի փրկելու:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Telegram-ում մեծածավալ ռեդիզայն է իրականացվել

Telegram հավելվածի հիմնադիր Պավել Դուրովն անդրադարձել է Ռուսաստանում հավելվածի սահմանափակման հարցին: Իր տելեգրամյան ալիքում նա գրել է, որ Ռուսաստանում սահմանափակում են Telegram-ը, որպեսզի ստիպեն երկրի քաղաքացիներին՝ օգտվել պետական հսկողության ներքո գտնվող մի հավելվածից, որը ստեղծվել է հետապնդման եւ քաղաքական գրաքննության համար: Դուրովը նկատել է, որ 8 տարի առաջ Իրանն էլ նույն ռազմավարությունն է փորձել կիրառել, սակայն հաջողության չի հասել: Իրանում էլ, չնայած արգելքներին, քաղաքացիների մեծ մասը շարունակել է օգտագործել Telegram-ը՝ շրջանցելով գրաքննությունն ու սահմանափակումները: Դուրովը նաեւ ասել է, որ քաղաքացիների ազատությունների սահմանափակումը ճիշտ որոշում չէ: Telegram-ը հանդես է գալիս խոսքի ազատության եւ գաղտնիության օգտին՝ անկախ որեւէ ճնշումից:

Դուրովը նաեւ հայտնել է, որ Telegram հավելվածի Android համակարգով աշխատող տարբերակի համար մեծածավալ ռեդիզայն է իրականացվել: Նա ընդգծել է, որ այն վերջին տասնամյակի ամենամեծ ծավալով ռեդիզայնն է: Փոփոխված տարբերակն արդեն հասանելի է բոլոր սարքերի համար: «Մնացել է մշակելու որոշ դետալներ, սակայն, ընդհանուր առմամբ, թարմացումներն ավարտված են եւ հասանելի բոլորին»,- գրել է Դուրովն իր Տելեգրամ ալիքում: Հիշեցնենք, որ թարմացումն իրականացվել է անցյալ շաբաթ:

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԵՆԴԱՆԻ ԵՆ ՊԱՀԵԼ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԸ

2010-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ն արեւմտահայերենը ներառել է այն լեզուների շարքում, որոնք գտնվում են վերացման վտանգի տակ: Սա, իհարկե, տագնապեցնող է հայ ժողովրդի համար, սակայն, այնուհանդերձ, այսօր էլ կան հեղինակներ, որոնք փորձում են կենդանի պահել արեւմտահայերենն ու ստեղծագործել արեւմտահայերենով: Նրանցից առաջինը, իհարկե, Գրիգոր Պըլտյանն է: Ծնվել է Բեյրութում, 1945 թվականին: 1967 թվականին տեղափոխվել է Ֆրանսիա, որտեղ՝ Փարիզի Սորբոնի համալսարանում ուսանել է փիլիսոփայություն եւ աստիճանաբար դարձել այն դեմքը սփյուռքահայ գրականության մեջ, որպիսին ընկալվում է գրաքննադատների կողմից՝ ամենից կարեւոր գրական անձը, որը գրում է արեւմտահայերենով: Ավելի քան 30 հատոր պոեզիայի, արձակի եւ գրաքննադատական հոդվածների ու էսսեների հեղինակ է Պըլտյանը: Դասավանդել է հայերեն Փարիզի Արեւելյան լեզուների եւ քաղաքակրթությունների ինստիտուտում: Զուգահեռաբար զբաղեցրել է Լիոնի համալսարանի աստվածաբանության ֆակուլտետի հայրաբանության ամբիոնի պրոֆեսորի պաշտոնը: 1997 թվականին հրատարակել է իր «Շեմեր» վեպը՝ արեւմտահայերենով: 2011-ին այն թարգմանվել է ֆրանսերեն, Սոնյա Բեքմեզյանի կողմից: Այս վեպով սկսվում է նրա պատումաշարը, որում հեղինակի ժամանակների Բեյրութը վերակենդանանում է ընթերցողի աչքերի առաջ՝ իր բույրերով, ձայներով, մարդկանցով ու հարաբերություններով: Նրա համար «սփյուռքահայ գրականությունը» ոչ թե կորցրած Էրգրի կարոտի գրականություն է, այլ արեւմտահայերենով ստեղծվող գրականությունը, որտեղ ներկայացվում են սփյուռքահայ կյանքն ու փորձառությունը՝ Հայրենիքից դուրս: Նրա գործերը պահպանողական համայնքային շերտերը բավականին զգուշորեն են ընդունում՝ հաշվի առնելով այն, որ Պըլտյանն իր գրականությամբ շատ կարծրատիպեր է կոտրում:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՋԵՅ ԴԻ ՎԵՆՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՅՑԻ «ՀՈՒԶԱԿԱՆ» ՈՒ «ԻՐԱԿԱՆ» ԿՈՂՄԸ

Միացյալ Նահանգների փոխնախագահ Ջեյ Դի Վենսի այցը Հայաստան, շարունակում է մնալ քննարկումների կենտրոնում եւ ոչ միայն Հայաստանում: Ռուս քաղաքագետ Սերգեյ Մարկեդոնովն իր վերլուծականում գրում է, որ երեւանյան այցի ժամանակ թե՛ փոխնախագահ Վենսը, թե՛ Հայաստանի քաղաքական գործիչները եւ թե՛ պետական ԶԼՄ-ները հաճոյախոսությունների հարցում ժլատություն չեն արել: Եվ Վենսն է իր այցը համարել պատմական, եւ հայկական կողմի շատ ներկայացուցիչներ, հատկապես՝ իշխանական: Սակայն եթե զգացական բաղադրիչը հանենք, ապա եկեք տեսնենք, թե առարկայորեն ինչ արդյունքներ արձանագրեց Վենսի այցը Հայաստան:

«Այսօր Հայաստանում իշխանամետ ուժերն ու ընդդիմադիրները փորձում են վերաիմաստավորել վերջին հինգ տարիների իրողությունները. Ղարաբաղի կորուստ, Ռուսաստանի հետ հարաբերությունների փոփոխություններ, Արեւմուտքի հետ հարաբերությունների փոփոխություններ, Ադրբեջանի հետ հաշտեցման փորձեր, Թուրքիայի հետ հարաբերությունների նորմալացման ազդակներ: Այս ամենի համատեքստում Միացյալ Նահանգները կարծես թե առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերել: Թեկուզեւ միայն այն բանի համար, որ Սպիտակ տան ղեկավար Դոնալդ Թրամփի վարչակազմը փորձում է ներկայանալ որպես Հարավային Կովկասի գլխավոր մոդերատոր: Կարելի է, որքան ուզես, ծիծաղել այն բանի վրա, որ Թրամփն անձամբ Հայաստանն ու Ալբանիան խառնում է կամ դժվարությամբ է արտասանում «Ադրբեջան» անվանումը: Սակայն դրանից չի փոխվում այն փաստը, որ Վաշինգտոնում է նախաստորագրվել Հայաստանի եւ Ադրբեջանի խաղաղության պայմանագիրը, եւ Հայաստանի տարածքով է անցնելու «Թրամփի ճանապարհը»:

Ի հեճուկս կանխատեսումների, սակայն, «Թրամփի ճանապարհը» չեղավ փորձագետների ուշադրության կենտրոնում՝ Վենսի այցի ժամանակ: Միացյալ Նահանգներն ու Հայաստանը ստորագրեցին միջուկային էներգետիկայի ոլորտում համագործակցության փաստաթուղթ՝ գրում է Մարկեդոնովը: Հայաստանի կառավարությունը մտադիր է կառուցել ամերիկյան օգնությամբ փոքր մոդուլային ռեակտորներ՝ գործող Մեծամորի ԱԷԿ-ին փոխարինելու համար: Այս համաձայնագիրը Հայաստանի իշխանությունները ներկայացնում են որպես մեծ նվաճում: Ընդդիմությունն էլ կասկածամտորեն է վերաբերվում դրան: Նախ, որովհետեւ որեւէ բարեգործության մասին խոսք լինել չի կարող անգամ: Ամերիկյան կողմը, իհարկե, կօգնի, բայց՝ վարկերով, որոնք Հայաստանն ինչ-որ ժամանակ ստիպված կլինի վճարել: Երկրորդ. Միացյալ Նահանգները դեռեւս չի կառուցում նման ռեակտորներ իրենց համար, եւ կասկածելի է, թե ինչպես են դա անելու Հայաստանում՝ մի երկրում, որը գտնվում է սեյսմիկ ակտիվ գոտում: Մեծամորի ԱԷԿ-ն իր նշանակությամբ համարժեք է Գյումրու ռուսական բազային: Այն Երեւանի եւ Մոսկվայի միջեւ հարաբերությունների ռազմավարական լինելու հիմնական բաղադրիչներից է: Այս համատեքստում պատահական չէ ՌԴ ԱԳ նախարարի տեղակալ Միխայիլ Գալուզինի՝ «Իզվեստիայի» հետ զրույցում Հայաստանի միջուկային էներգետիկ ոլորտի հետ կապված դիտարկումը կամ գնահատականը, որն ընդհանուր իրավիճակին պաշտոնական Մոսկվայի տված գնահատական կարելի է համարել: Մոսկվան իրեն համարում է Հայաստանի էներգետիկ անվտանգության գլխավոր երաշխավորը, սակայն կարծես թե Երեւանն այս ոլորտում էլ ցանկանում է դիվերսիֆիկացիա իրականացնել: «Վենսը, իհարկե, Հայաստան այցելեց ու գնաց, սակայն խնդիրները շարունակեցին մնալ, ու եղածների վրա ավելացան նորերը»,- կարծում է ռուս քաղաքագետը:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայտարարություն

Կորել է ՌԴ առողջապահության նախարարության Մոսկվայի Ի. Մ. Սեչենովի անվան պետական առաջին բժշկական համալսարանի (Սեչենովյան համալսարան) դաշնային պետական ինքնավար բարձրագույն կրթության կրթական հիմնարկի վկայականը՝ տրված Բլբուլյան Տաթեւիկ Արմենի՝ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան շնորհելու մասին:

Վկայականը տրված է 29 սեպտեմբերի 2021 թ.-ին, N6 0937/РКН N 000172 հրամանով:

Սույն վկայականը կորելու պատճառով, խնդրում եմ այն ճանաչել անվավեր:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

բաժանորդագրություն

Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am

Ստորագրված է տպագրության 13.02.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

«Ագարակի հանքշին վարչություն» ԲԲԸ ծանուցագիր

ՀԱՐԳԵԼԻ ԲԱԺՆԵՏԵՐ

Տեղեկացնում ենք Ձեզ, որ 2026թ. մարտի 4-ին, ժամը 12:00-ին ՀՀ, Մեղրի, Ագարակ, Սայաթ-Նովայի 12 հասցեում տեղի կունենա «ԱԳԱՐԱԿԻ ՀԱՆՔՇԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը

2026Թ. ՄԱՐՏԻ 4-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳ

1. Ընկերության 2025թ. տարեկան հաշվետվության, հաշվապահական հաշվեկշռի հաստատում
2. Ընկերության 2025թ. ֆինանսական հաշվետվությունների արդյունքների հաստատում
3. Ընկերության բաժնետերերին 2025թ. ֆինանսական տարվա համար շահութաբաժին չվճարելու մասին Ընկերության գլխավոր տնօրենի կողմից ներկայացված առաջարկի հաստատում:

Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակի կազմման ամսաթիվը սահմանվել է 2026թ. փետրվարի 10-ը:

Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցողների գրանցումն սկսվում է 30 րոպե շուտ՝ ժամը 11:30-ին:

Բաժնետերերը բաժնետերերի ընդհանուր ժողովում քննարկվող հարցերին վերաբերող տեղեկություններին եւ նյութերին կարող են ծանոթանալ՝ դիմելով 2026թ. փետրվարի 10-ից, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 12:30-16:30-ը զանգահարելով 0(43)560656 հեռախոսահամարին:

Տրամադրվող տեղեկությունների եւ նյութերի ցանկը հետեւյալն է՝

ա. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգի հարցին կողմ քվեարկելու դեպքում ընդունվող որոշումների նախագիծ

բ. 2025թ. ֆինանսական հաշվետվություններ:

Խնդրում ենք Ձեզ ներկա լինել բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին

«ԱԳԱՐԱԿԻ ՀԱՆՔՇԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ» ԲԲԸ գլխավոր տնօրեն
Էլեն Նաույոկիենե

«Ագարակի հանքշին վարչություն» ԲԲԸ ծանուցագիր

ՀԱՐԳԵԼԻ ԲԱԺՆԵՏԵՐ

Տեղեկացնում ենք Ձեզ, որ 2026թ. մարտի 6-ին, ժամը 12:00-ին ՀՀ, Մեղրի, Ագարակ, Սայաթ-Նովայի 12 հասցեում տեղի կունենա «ԱԳԱՐԱԿԻ ՀԱՆՔՇԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ» ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը

2026Թ. ՄԱՐՏԻ 6-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳ

• Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի համախմբում:

Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակի կազմման ամսաթիվը սահմանվել է 2026թ. փետրվարի 10-ը:

Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովին մասնակցողների գրանցումն սկսվում է 30 րոպե շուտ՝ ժամը 11:30-ին:

Բաժնետերերը բաժնետերերի ընդհանուր ժողովում քննարկվող հարցերին վերաբերող տեղեկություններին եւ նյութերին կարող են ծանոթանալ՝ դիմելով 2026թ. փետրվարի 10-ից յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 12:30-6:30-ը զանգահարելով 0(43)560656 հեռախոսահամարին:

Տրամադրվող տեղեկությունների եւ նյութերի ցանկը հետեւյալն է.

ա. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգի հարցին կողմ քվեարկելու դեպքում ընդունվող որոշումների նախագիծ

բ. Համախմբման կարգ:

Խնդրում ենք Ձեզ ներկա լինել բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովին

«ԱԳԱՐԱԿԻ ՀԱՆՔՇԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ» ԲԲԸ գլխավոր տնօրեն
Էլեն Նաույոկիենե

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am